

Վ. ՊԵՏՐՈՎ



ԼԱԳԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏՅՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

891.715


Ք-50



891.715 ⁴⁸
Վ. ՊԵՏՐՈՎ
7-50

Մ Ի Լ Ա Գ Ե Ր Ի
Պ Ա Տ Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

2679
1006
28197



ՊԵՏԱԿՈՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1933

յեկել ենք, միասին կանգնել: Իսկ յես դատվել եմ ողակից: Ինձ հետ են կեշկա Մալագինը և Վանկա Որեշկովը: Մենք միշտ միասին ենք: Տղերքը մեզ անվանել են «անբաժան լեռյակ»:

2

Մենք մեկնում ենք լողեր: Հավաքույթը ցերեկվա ժամը յերեքին է: Գնացքը մեկնում է չորս ժամ քառասուն րոպեյին: Կայարան յեկանք շարքով՝ յերեք հոգի ամեն մի շարքում. ամբողջ ճանապարհը յերգելով ենք յեկել:



Դուրս ենք յեկել յերկաթուղու իջավայրը և կանգնել — վոչ հետ կարողես գնալ, վոչ՝ առաջ: Կաթնավաճառներն իրենց ամաններով, ամառանոց գնացողներն

իրենց ճամբարկղներով ու կապոցներով, գյուղացիները տոպրակներով խառնվել եյին: Անցնելու հնարավորութիւն չկա:

— Ստիպված պիտի լինենք բուֆետներէ վրա գնալ, — ասաց Վանկա Որեշկովը:

Բայց ահա յեկավ կայարանի հերթապահը: Հերթապահի գլխարկի վերին մասը կարմիր էր: Հերթապահը հրամայեց՝

— Ազատել վագոնը:

Ամբողջ ժողովրդին փոխադրեցին մյուս վագոնները, իսկ մեզ տվին մի ամբողջ վագոն — նստի ու գնա: Մեր ղեկավար Կոստյան բարձրացրեց ձեռքը՝

— Շարվել ողակներով — դեպի վագոն:

Շարվեցինք մի ակնթարթում և շարժվեցինք առաջ. իսկ Վանկա Որեշկովն առաջ անցավ և ֆանֆարը փչեց: Նա խմբի ամենալավ ֆանֆարիստն է:

Մենք ներս մտանք վագոն — առաջ՝ փոքրերը, հետո՝ մեծերը: Իսկ ճամբարկղները փոխադրում եյինք շղթայով՝ Կոլխան տախտեր Միտկային, Միտկան՝ Սանկանյին, Սանկան՝ Ֆիմկային, իսկ վագոնի լուսամուտից ընդունում էր ղեկավար Կոստյան:

Հերթապահը սուլեց: Գնացքը շարժվեց:

Կայարանն անցանք: Վագոնը լուսավորվեց: Բոլորը վագեցին դեպի լուսամուտները՝ նայելու: Սկզբից վոչ մի նորութիւն՝ սովորական տներ: Միայն վայրերն եյին նոր:

Անցանք կամուրջը: Նա կախված է փողոցի վրա, իսկ նրա տակից վագում է տրամվայր, և ռարդիկ զբոսնում, զբոսնում են և գլուխներն անգամ չեն բարձրացնում — սովորել են:

Հետո տեսնում ենք մի մեծ, խոշոր ու խոշորագույն կլոբ տուն:

— Այստեղ նավթ են պահում, — ասաց Ֆիմկան:

— Իսկ իմ կարծիքով գազաթագուս է, գազերից են թագնվում, — ասաց Կեշկան:

— Իսկ իմ կարծիքով բաղանիք է, — ասաց Վանկա Որեշկովը: — Տեսեք ինչ խավար լուսամուտներ են:

Քաղաքից դուրս յեկանք, իսկ այնտեղ արտերն են և սիպիտակ, յերկարավուն ճանապարհը: Ծանապարհի վրա յերեվում են խոտով բարձած սայլեր: Սայլապանները պառկած են սայլերի վրա՝ սանձերը բաց թողած: Ձիերը քայլում են ինքնակամ, առանց շտապելու: Հանկարծ տեսնում ենք ձիերը խրանեցին մի կողմ, սայլերը ճոճվեցին, սայլապանները վեր թռան և սկսեցին ձեռքերով թափահարել: Իսկ ինչ է պատահել: Ավտո անցավ, յերեվի քաղաքիցն էր:

— Մեր ձիերն սկի ականջներն ել չեյին շարժի, — ասաց Կեշկան: — Դե սրանք սովոր չեն:

Առաջին կայարանում վագոններից կաթնավաճառներն սկսեցին դուրս թռչել: Կայարանում պլատֆորմ չկա, վագոնների աստիճանները բարձր են, դժվար է թռչելը: Բայց վոչինչ, բոլորը դուրս թռան, իսկ գնացքը շարժվեց առաջ:



Գնացիւնք-գնացիւնք — տեղ հասանք: Կայարանում աշտարակաձեւ գիտանոցներ և ծածկված փայտյա պլատֆորմ: Պլատֆորմի վրա ժողովուրդն եր գրտանում և բազմաթիւ պիտուեքներ՝ փողկապներով, միայն՝ բոլորն ել անձանոթ են: Մենք սկսեցինք դուրս գալ: Դուրս յեկանք առանց աղմուկի — նախ՝ փոքրերը, հետո՝ մեծերը: Իրերը նորից դուրս բերինք լուսամուտից՝ շղթայաձեւ, և մի կողմ դարսեցինք:



— Բա ուր գնանք: Իրերը վոնց անենք — հարցնում են տղաները:

Ղեկավար Կոստյան նայում է շուրջը և շրթունքները կրծտում: Իսկ յերբ նա կրծտում է շրթունքները, նշանակում է՝ շղայնանում է: Դե ախր ինչպէս շղայնանաս: Հինգ որ առաջ հարվածային պիտուեքների հետ լազեր է մեկնել ղեկավար Սառան: Նրանք պիտի գային մեզ գիմավորելու և իրերի համար սայլեր պիտի ուղարկեյին: Մենք յեկանք — վոչ Սառան կա, վոչ ել սայլը:

— Ստիպված պիտի լինենք կայարանում գիշերելու, — ասում է Վանկա Որեշկովը:

Հանկարծ աղջկերքը ճվճվացին՝

— Սառան, Սառան:

Նայում ենք շուրջներս — վոչ վոք չկա: Իսկ աղջկերքը նորից գոռում են՝

— Սառան, Սառան, և ձեռքերով գնացքն են ցույց տալիս:

Այստեղ շոգեշարժը սուլեց, գնացքը շարժվեց, և մենք բոլորս տեսանք մյուս կողմից գաշտավայրի վրա կանգնած է մեր Սառան, յերկու հարվածայինների հետ, իսկ կողքերին ել՝

դատարկ սայլ: Աղջկերքը նրանց նշմարել են վագոնների արանքներից:

— Դե ի՞նչ եք դուք ել թագնվել, — ասաց Կոստյան: Յես կարծում եյի թե չեք յեկել:

Իսկ Սառան պատասխանում է.

— Իսկ ինչո՞ւ պիտի աղերքը ամբօխի մեջ խառնվելին: Մեծ գաշտավայրը լավ եր:

— Շարվել ողակներով, — նորից գոռաց Կոստյան: — Հինգերորդ և չորրորդ ողակներ, իրերը դարսել:

Կոստյան նրանց կանգնեցրեց շղթայով, և մեր իրերը ձեռքից ձեռք թռչելով հասան մինչև սայլը: Իրերը դարսեցինք, իսկ



մենք շարք կանգնեցինք և վտաքով գնացինք: Միայն ամենից փոքրերին նստեցրինք սայլի վրա՝ իրերի հետ: Իսկ Վովկային մինչև անգամ պարանով կապեցինք, նրս-

տացրինք յերկու գամբուղների միջև. յերկու շրջան պարանով կապեցինք, վոր վայր չընկնի:

— Մինչև լազերը հեռու չե, — ասում է Վանկան: —

Դուք չեք հասնի, կհոգնեք:

— Իսկ դու կհասնես, — հարցնում է Կեշկան:

— Իսկ ինչո՞ւ չպիտի հասնեմ, — ասում է Վանկան: Յես անցյալ տարի ել եմ գնացել: Յես մի անգամ ել քառատուն վերստ եմ կտրել: Անցել եմ և չեմ նկատել:

— Նո՛ւ, — ասում է Կեշկան, — քո հետևից մենք մի կերպ քաշ կգանք:

Գնում ենք, գնում, գնում — կարծես թե չերբեք չենք հասնի մինչև լազեր: Ճանապարհը յերկար է ու յերկար, ուղիղ և ուղիղ, իսկ կողքերից արտերն են, արտերումն ել հաճարն է բուսնում:

Առաջ գնում էյինք յերգելով: Յերգում էյին բոլորը,

ինչքան ձայները դուռն էր, մինչև անգամ նրանք, ովքեր
յերգել չգիտեյին, գոռում էին ինչպես գիտեն:

Հետո կամաց կամաց ձայները մեղմացան: Մեկը յերգում
է, յերկուսը՝ ձայնակցում, մի քիչ յերգում են և նորից լուռ:

Հանկարծ լուռ ենք՝ մեր դեկավարները վիճում են:

— Այնտեղ վոտները կթրջեն...—ասում է Կոստյան:

— Իսկ այնտեղ ավելի շատ կհոգնեն...—ասում է Սառան:

— Իսկ այնտեղ բոլորովին ել մոտիկ չի...—ասում է Կոս-
տյան:

— Դե չե, այնտեղ յերկու անգամ ավելի մոտ է...—ասում
է Սառան:

Մենք ականջներս սրեցինք, իսկ Կեղկա Մալազինը թռավ
առաջ:

— Մենք թաց տեղերից չենք վախենում, — ասում է
Կեղկան: — Միայն թե շուտ հասնենք: Իսկ Վանկա Որեշկովը
ասում է՝

— Մթնում տեղ չենք հասնի, պիտի առվի մեջ գիշերենք:

Ղեկավար Կոստյան նայեց մեզ վրա և դուռաց:

— Տեղներդ, շարքից դուրս չգա՛լ:

Իսկ հետո կարգադրեց բոլորին՝

— Շղթայով դեպի ձ-ա-մի:

Մենք քայլելով շղթա կազմեցինք և ճանապարհից դար-
ձանք դեպի արտերը: Ճանապարհը նեղ է, հաճարը՝ բարձր,
իսկ հասկերի միջից տերեփուկները և ելի ինչ վոր դեղին
ճաղիկներ: Յես դրանցից մեկը կտրեցի — բռիս մեջ դեղին
փռչի մնաց:

— Դե սա ի՞նչ ճանապարհ է, — ասում է Վանկան: —
Անցյալ տարի մենք այստեղից չենք անցել:

— Յերգեք, — կանչեց Կոստյան: — Ի՞նչ եք թմրել:

Մենք գնում ենք վոտներս քարշ տալով: Սկզբում վոտ-
ներս թռչում էին և գետինն անգամ չեցին զգում, իսկ հիմա
յուրաքանչյուր փոքրիկ քար, յուրաքանչյուր մացառ, ճյուղ
ցավեցնում է:

Մենք, Վանկա Որեշկովի և Կեղկա Մալազինի հետ, յետ
մնացինք. քալում ենք բոլորից յետ: Տղերքը չեն յերևում.
միայն հաճարի վրայից նկատվում և անհետանում են գլխարկ-
ներն ու փալում է դրոշակի վոսկեգույն ծալրապանակը:

Վանկան գրպանից հանեց գրչահատ դանակը, բացեց և
փոքրիկ լեզվակով փայտ է կտրում:

— Վանկա, ինչի՞ համար է, — հարցնում եմ:

— Հիմա կտեսնես:

Հանկարծ տեսնում ենք՝ դրոշակը չկա: Ո՞ւր կորավ նա:

— Վազենք, — կանչեց Կեղկան:

Յե՛վ մենք վազեցինք: Տեղ հասանք, իսկ այնտեղ առաջ-
ներս ձորն է: Փեշերն ուղիղ չեն, վոտների տակից քարեր
ու ավազ են թափվում, իսկ ներքեվումն ել առվակն է վազում:

Տղաները խմբվեցին, վոչ վոք առաջինը չի ուզում իջնել:

— Ամու՛ր կացեք, — կանչեց Վանկան, հրեց տղաներին
և գլխկոնձի ներքև թռավ:

Յե՛վ ի՞նչպես է գոռում:

Կեղկան քաշեց իմ ձեռքից, յես ել գլորվեցի, իսկ կող-
քիցս ել տեսնեմ՝ Կեղկան է փոխանի վրա սզողում:

Գլորվեցինք մինչ ներքեվ. և ինչպե՛ս ենք գնում:

Իսկ մեր հետեվից՝ բոլոր տղաները, վորը սողալով, վորը
գլխկոնձի, վորն ել գլխիվալը: Հենց գլորվում են մինչ
ներքեվ, սկսում են ճվճվալ: Վերեվից թվում էր, թե ներ-
քեվում խոտ է բուսնում, իսկ այնտեղ ճահիճ էր:

Դեպի վեր սողացինք չորեքթաթ — յես՝ Վանկայի
հետեվից, Կեղկան՝ իմ հետեվից, իսկ մնացածն ել Կեղկայի հե-
տեվից:

Վերջապես դուրս յեկանք: Մենակ Վանկա Որեշկովը ճահ-
ճում փայտը կորցրեց:

— Վոչի՛նչ, նա ինձ սկի պետք էլ չեր, — ասաց Վանկան
և դանակը դրեց գրպանը:

Նորից գուրս յեկանք ճանապարհ: Արեւիլ մայր մտավ,
սկսեց միջնել:



— Շնու կհասնենք, Սնու, —
հարցնում են տղերքը:

Քայլեցինք, քայլեցինք, հանկարծ
Կոստյան կանչում է՝

— Տղերք, ուրախ քայլեք, ահա
մեր ամառանոցը:

Տղերքը բոլորը միաբերան հառա-
չեցին: Ճանապարհի ծայրին կանգնած է մի տուն, վոր բոլո-
րովին տան նման չէ, այլ մի խավար, կեղտոտ խրճիթ: Կու-
սամուտները տախտակով խփած, իսկ շուրջը և վոչ մի ծառ,
միայն մի չոր ճյուղ է ցցված:

— Չե՞ք ուզում, — հարց-
նում է Կոստյան:

— Չենք ուզում, — կան-
չեցին բոլոր տղաները:

— Իե, յեթե չեք ուզում,
ուրեմն առաջ շարժվեցեք:

Յեւ շարժվեցինք առաջ:
Գնում ենք, գնում, հանկարծ
նորից Կոստյան կանչում է՝



— Այ, ես ել մեր ամառանոցը:

Մենք նայեցինք, ուր Կոստյան ցույց տվեց, իսկ այնտեղ
նայելու վոչինչ չկար: Բլուրի տակ յերկու խրճիթներ են, մեկը՝
մեծ, ծխնելույզով, իսկ միջուսը՝ փոքր, առանց ծխնելույզի:
Խրճիթների առաջ՝ յերկու քոտոս ծառ և առանց հենա-
րանի մի նստարան:

— Իե, սա ի՞նչ ամառանոց է, — աղմկեցին տղերքը: — Իու
միշտ խաբում ես:

— Նու, — ասում է Կոստյան, — են ժամանակ համրեք մին-
չև հարուր: Հարյուր քայլ գնանք, մեր ամառանոցը կլինի:

Ելի շարունակեցինք գնալ: Յես սկսեցի համրել, բայց



խառնեցի — շփոթեցի: Իսկ կողքիս՝ կեչկան քթի տակին մոմը-
ռում է:

— Քառասուն յերեք, քառասուն չորս:

— Շփոթվեց, — հանկարծ գոռաց Վանկան, — շփոթվեց,
տղերք:

Իսկ Կոստյան ծիծաղում է՝

— Թողնել՝ նորից սկսեք հաշվել: Հարույր քայլ գնանք
մեր ամառանոցն է լինելու:

Մոտեցանք անտառակին. նորից հաշիվներս խառնեցինք:
Մեկը յոթանասուն հինգ էր հաշվել, մեկը՝ արդեն իննսուս:
Անտառակում մուխն է, ծառերն աղմկում են:

— Յես հիմա նրանց կվախեցնեմ, — շնչաց մեզ Վանկան և
մի կողմ վազեց: Մենք մի քիչ առաջ գնացինք, հանկարծ
թփերի միջից Վանկան վաչրենի ձայնով գոռում է.

— Ո-հո-հո:

Իսկ տղերքն սկի չկանգնեցին, միայն հարցնում են.

— Ես վո՞ր հիմարն է եհտեղ գոռում:

Անտառակի շավիղով քայլեցինք մոտ տասը բոպե: Յեւ
հանկարծ ծառերի հետեվից ուղիղ աչքներիս առաջ բուսավ մի
սպիտակ ամառանոց՝ լուսամուտները լայն, յերկու հարկանի
տուն, պատշգամբը՝ ճաղաշարք և բակումն էլ՝ վառվող խարյուկ:
Իսկ խարույկի շուրջն էլ՝ նստոտած մարդիկ: Այ, սա ամառա-
նոց է, մերը լինել:

— Բարո՞վ եք յեկել, — խմբով գոչեցին խարույկի շուրջը
նստած մարդիկ և վազեցին դեպի մեզ: Մենք նրանց դիտե-

ցինք — ախր սրանք մեր պիտներն են, մեր հարվածայինները:

Ուրեմն սա իսկական ամառանոցն է:

8

Բակում արդեն կանգնած է իրերով լիքը սայլը, և հարվածայիններն իջեցնում են իրերը:

Մենք շատ մեծ ցանկութուն ունենք ամառանոցը նայելու, իսկ վոտներս տեղից չեն շարժվում: Կոստյան մեզ սրբիչներ տվեց և առաջնորդեց գետակը՝ լվացվելու:

— Ո՛հ, Կոստյա, չենք ուզում, հոգնել ենք, — ճվճվացին աղջիկները:

— Չեք ուզում, մի՛ յեկեք, — ասաց Կոստյան, — մենակ թե կեդատոներին ամառանոց չենք թողնի:

Գետակի մոտ մութն է, վոտներին տակի ավազը թաց է, իսկ շուրջներս կանաչն է խշխշում: Յես վախ եյի դգում — ով է իմանում՝ այնտեղ կանաչների՝ խոտերի մեջ ինչներ կան, գուցե ոճ կամ ինչ վոր բղեղներ, մթության մեջ վոչինչ չես տեսնի: Տեսնեմ մյուս տղաներն ել շուրջներն են նայում և խմբվել են մի տեղ: Վոչինչ, այնուամենայնիվ ձեռ ու վոտներս լվացինք և վազեցինք հետ:

Բակում մեզ դիմավորեց Դաշա մորաքույրը — աղախինը: Դաշա մորաքույրը կցված կին պատգամավորուհի յե: Նա շատ հաստ է ու բարի, բոլոր տղաներն ել նրան սիրում են:

— Հը՛, վո՛նց է, տղերք, հոգնե՞լ եք, — հարցնում է Դաշա մորաքույրը:

— Հոգնել ենք, — խմբով գոչեցին բոլորը:

— Իսկ ուտել ուզո՞ւմ եք:

— Ուզում ենք, — գոչեցին նորից բոլորը:

— Իսկ գուցե, լեթե հոգնել եք, ուղիղ կպառկեք կքնեք, հը՞, — հարցնում է Դաշա մորաքույրը:

— Քնել չենք ուզում, — գոչեցին բոլորը շատ բարձր:

Դաշա մորաքույրը մեզ ճաշարան տարավ: Հարվածայինները մեզ ամաններով ապուր մատուցեցին. ապուրը պատրաստած եր կաթից և խմորուկներից: Յես ուզում եյի մի լավ նաչել ճաշարանը, բայց չհասցրի՝ սուպը շատ համեղ եր: Իսկ աչքերս ել իրենց-իրենց փակվում ելին: Հագիվ մահճակալիս հասա: Պառկելուն պես քնեցի:

9

Առավոտյան արեվն ինձ արթնացրեց, լուսամուտից ուղղակի աչքերս եր ծակում: Նալում եմ դեպի լուսամուտը. վողջը ծառեր են: Քաղաքում այդպիսին չես տեսնի, բարձր են, տնից ել բարձր և շատ կանաչ:

Յես գլուխս հանեցի լուսամուտից:

Տեսնեմ բակի մի մասում գտնվում է խոհանոցի տնակը, ծխնելույղից ծուխն է դուրս տալիս, իսկ շեմքում կանգնած է Դաշա մորաքույրը՝ ամբողջովին կարմրած և գոգնոցով յերեսի քրախնքն է սրբում: Դե, յերեվի շոգ որ է, յեթե Դաշա մորաքույրն այդքան կարմիր է:

Յես լուսամուտից բոլորվին կռացաներքեվ, վոր ամբողջ բակը տեսնեմ: Նայեցի դեպի աջ, իսկ այնտեղ տերեվների միջից գետակն է պսպղում:

Այստեղ յես չհամբերեցի և գոռացի.

— Տղե՛րք, լողանանք

Վեր թռանք, տրուսիկներս հագանք ու հայդա՝ ննջարանից բակը:

10

Բակում վոչ մի շունչ, միայն սագերն եյին զբոսնում հետ ու առաջ և վզները յետ ձգում: Յես կանգ առա. չեմ սիրում անձանոթ կենդանիներին, յերբեք չես իմանում՝ նրանք չար





են, թե չե: Վանկա Որեշկովը ծափ տվեց: Սագերը ճղճղա-
ցին և թեվերը թափահարելով սկսեցին վազել զանազան կող-
մեր: Ծիծաղելի յե:



Իսկ բակի դռան մոտ, վոր դեպի գետակն
ե տանում, ուղղակի ճանապարհի մեջտեղը մի
շուն ե պառկած. չար ե թե խելոք, ո՞վ ե իմա-
նում, միայն թե մեծ ե ու բըրդոտ: Մենք յերեքս
ել կանգ առանք և սպասում ենք — կհաջի,
թե վոչ: Իսկ շունը պոչը թափահարեց և շուռ
յեկավ մեջքի վրա. նշանակում ե՝ խելոք ե: Մենք




թռանք նրա վրայով և շավիղով վազեցինք ուղիղ դեպի գետակը:
Հասանք գետակին, այնտեղ վոչ
վոք չկա. ափն ուղիղ ե, ավազոտ, իսկ
ջուրն աղմկում ե և ողակներ հյուսում:
Մենք մինչև իսկ չհանգստացանք, մի
անգամ ել տրուսիկներս մի կողմ շարը:
տեցինք և ուղիղ ջուրը: Հիմա վո՞նց ենք ճվճվում: Ջուրը
սառն ե, ինչպես սառուց, և վողջ մարմիններս ասեղների
պես ծակծկում եր:

Քանի վոր ջուրն ենք մտել, ուրեմն պիտի լողանալ:
Լողացանք և գնացինք տուն:

11

Մինչեվ նախաճաշ անգործ թրեվ յեկանք: Յիրբ ուտել
ես ուզում, գլուխք ել վոչինչ չի մտնում: Միշտ սպասում ես
ճաշի ազգանշանին: Ճաշարանում հարվածայիններն աշխատում
են ամաններով, աղմկում, իսկ մեզ ներս չեն թողնում: Համա
և լավն ե մեր ճաշարանը: Կտուրը սովորական կտուր ե, առանձ-

նապես վոչինչ չկա, իսկ պատերը
միջանցիկ են՝ առաջ տախտակ ե,
հետո՝ արանք, նորից տախտակ,
նորից արանք. ամեն մի արանքի
լայնքը բոռենցքի չափ ե, կարելի
յե ձեռքն անցկացնել: Բոլոր չորս
պատերն ել եսպես են: Իսկ ներ-
սից հատակը ներկված չե, սե-
ղանները և նստարանները նույնպես, իսկ պատերի վրա լո-
ղունդներ են կախված՝



- | | |
|---|-----------------------|
| 1 | Կերակուրը լավ ծափը |
| 2 | Գաճաղի կեր |
| 3 | Իրար հաց չափքել |
| 4 | Կամաց գնաս, ռաս կգնաս |

եղ հարվածայիններն ելին գրել ու մեզ սպասում:
Նախաճաշին մեզ տվին յերկուական ձու, մի-մի կտոր
ուպիտակ հաց՝ կարագով, իսկ սեվը՝ ինչքան ուզես: Հետո ել՝ կաթ:
— Ով վոր ցանկանա, ավելորդ ել կարող ե խնդրի, — ասաց
Սառան: Միայն աղմուկ մի հանեք, այլ ձեռք բարձրացրեք:
Հենց նա ասաց թե չե, սեղանի ծայրից դոչեցին՝
— Իմը չի, չեմ ուզում:
— Հրեն իմս, Շուրիկայի մոտ ե: Շուրիկա, հետ տուր:
— Իմս ե:
— Իմս չի:

12

Մենք բոլորս վզներս ծռեցինք եղ կողմը, վոչ մի կերպ
չենք կարողանում ջոկենք, թե ինչ կա ետտեղ: Իսկ ետտեղ
մյուս կողմից ել աղմուկ:
— Իմը յերկնագույն ե:
— Իսկ ինչո՞ւ վոչ իմով:



— Ի՞մը տուր:
 — Ուրիշինը չեմ ուզում:
 — Ի՞մս է:
 — Ի՞մը չի:
 — Ի՞նչ արձուկ է, — հարցնում եմ
 Վանկային:

— Ձգիտեմ, — ասում է Վանկան: Յեւ
 հանկարծ նույնպես ամբողջ կոկորդով են-
 պես է գոռում:
 — Ի՞մը չի, ի՞մը կարմիր յերկզով է,
 ի՞մը տուր:

Բոլոր տեղերից արմկեցին. ձայներին
 վրա վազեց Կոստյան: Սառան անցավ սեղա-
 նի շուրջը: Իսկ եստեղ ինձ ել կաթ բերին:

— Իսկ ինչո՞ւ իմս չի, — գոռացի յես:
 Մեծ գավաթ է՝ սպիտակ, ծաղիկնե-
 րով. իմիցն ինչքան մեծ է, բայց այնու-
 ամենայնիվ իմ գավաթից խմելն ավելի համեղ է:

Գոռացի և իսկույն հասկացա թե ինչիցն է ամբողջ աղ-
 մուկը: Գավաթներն ախր մենք անից ենք բերել և բոլորն էր
 տարբեր՝ սպիտակ, յերկնագույն, վարդագույն, յերկզով, առանց
 յերկզի, ծաղիկներով, կաավիկներով, մեկը՝ ճենապակուց
 մյուսը՝ թիթեղից, իսկ մի գավաթ էլ ապակուց՝ թրաշած, և
 կանթն էլ ամբողջն ապակուց է:

Յես վեր թռա, նայում եմ, ո՞ւր է իմ գավաթը: Բոլորն էլ
 տեղերից վեր թռան՝ ձեռքերին գավաթները, գավաթներից
 կաթն է թափում և հոսում սեղանի վրա:

Տեսնեմ՝ նստած է Ժենկա կովալյովան, Ժպտում է և հան-
 գիստ իմ գավաթից կաթ է քաշում փորը: Իմ գավաթն ամբողջը
 ծաղիկներով է, և կոթի ծայրն էլ թուել է:

— Ձգաստ, դադարեցնել դարձադար, — գոռաց վողջ ճա-
 շարանով Կոստյան: Մենք լսեցինք, նրան ենք նայում:

— Իսկույն ևեթ նստեք տեղներդ, գավաթները չփոխել,
 ումն ինչ տվել են, նրանից էլ խմեք: Ումը դուր չի գալիս,
 կարող է դուրս գալ ճաշարանից:

Բոլորը նստեցին: Միայն Վանկա Որեշկովը կանչեց՝
 — Իսկ ինչո՞ւ յեն գավաթները խառնել: Կոստյան ձեռքը
 բարձրացրեց՝
 — Հանգիստ, եստեղ չվիճել: Հավաքույթը կլինի, կքնենք:

Նախաճաշից հետո Կոստյան ժողովեց մեզ տան առաջը:
 Տղերք, — ասաց նա, — այսուր մեր լազերի առաջին
 որն է: Պետք է այսուր վողջ լազերը կարգի բերել: Հրապա-
 րակը հավաքած չի, անհրաժեշտ է մաքրել: Խաղեր ենք բերել,
 պետք է նրանց հանել և արտագրել: Գրքեր ունենք, պիտի
 դրագարան սարքել: Ճոճանակը պիտի կախել: Ննջարաններում
 ապրողների ցուցակներ պիտի փակցնել: Խոհանոցում ոգներ
 Հերթապահություն նշանակել: Իսկ յերբ ես բոլորն արեցինք,
 դրոշակը կբարձրացնենք և կսկսենք հերթով լազերի կյանքը:

— Պետք է, այդպես էլ պետք է, — ասում է Կեշկան և կողքս
 հրում: Յես դառնում եմ և տեսնում՝ Վանկա Որեշկովն աչքով
 է անում և մատով ինչ վոր ցույց տալիս — առաջ՝ մեզ, հետո՝
 դեպի թփերը:

— Դու, դու և դու. — ցուցակները կգրեք, — ասում է
 Կոստյան և տղաներին շոկում: Իսկ Կեշկան կողքիցս շշնջում է՝


— Յանվի, ուրիշ աշխատանք կգտնենք: Ինքը կողե-
 կող՝ դեպի թփերը: Մուս ծալրիցն էլ Վանկա Որեշկովը ճղեց՝
 նույնպես դեպի թփերը:

— Դու, դու և դու — խոհանոց, — ասում է Կոստյան և
 ինձ ցույց տալիս: Յես գլխով նշան արի, դուրս յեկա առաջ,
 իսկ հետո՝ Կոստյայից մի կողմ, և վոնց եմ վազում: Մենակ
 հենց ինձ տեսան:

Հավաքվեցինք մենք թփերում՝ Վանկան, Կեշկան և յես:
 — Ո՞ւր, հարցնում եմ յես:

Իսկ Վանկան Ժպտում է:
 — Դե, ո՞ւր, — հարցնում եմ: — Ինչո՞ւ կանչեցիր:

9001
 28197
 2679



— Չես ուզում, գնա խոճանոց գեանախ՝ ձոր մաքրի, —
ասում է Վանկան: — Յես կարող եմ ձեզ տեղեր ցույց տալ:
Յես եստեղ ամեն ինչ գիտեմ: Իսկ առանց ինձ դուք վոչինչ
եք, պիտի ղեկավարի պոչից ման դաք փոքրերի պես, վոչ
մի տեղ ել չեք լինի:

Կեշկան հարցնում է՝

— Իսկ դու մեզ, Վանյա, ինչ ցույց կտաս:

— Ինչ վոր ուզեք, են ել ցույց կտամ, ասում է Վանկա
Որեշկովը: — Առաջին, վոր կգնանք անտառ: Ենքան սուռնկ
կա, վոր հաշիվ չկա:

— Դե, ասում է Կեշկան, — ա՛յ, ինչ եմ ասել:

— Հետո՝ եստեղ պատնեշ կա, բորբոքվին ել հեռու չի:
Մեծ պատնեշ է, ենտեղ կարելի յե ձուկ բռնել:

Դե, — նորից բացականշում է Կեշկան: — Ա՛յ, ինչ եմ
ասել:

— Իսկ ավելի հեռու, ճահիճ կա, իսկական ճահիճ, յեթե
վորազ ընկնի, կխրվի:

— Դե՛: Ա՛յ, սա ինչ եմ ասել:

— Դու ել ինչ ես դե հա դեն գցել: Չես հավատում, մի արի:
Եղ ժամանակ թփերը շարժվեցին, ժենկա կովալյովան
մեզ է մոտենում:

— Դուք, եզ ինչ է, փախել եք, — հարցնում է ժենկան
խիսա: — Դուք զործ չուենք, ինչ է:

— Միրազ ցավում է, ասում է Վանկան: Հիմարներն
աշխատում են, իսկ մենք կգնանք տեսարաններ գիտելու:

— Իսկ ինձ ձեզ հետ կարելի՞ յե, — հարցնում է ժենկա
կովալյովան:

— Ազնիվ խոսք տուր, վոր վոչ վոքի չես ասի, են ժա-
մանակ կարելի յե, — ասում է Վանկան:

— Ազնիվ խոսք՝ չեմ ասի — ասում է ժենկա կովալյովան
և ձեռքը բարձրացնում է, ինչպես հանդիսավոր խոստման
ժամանակ:

— Են ժամանակ գնանք:

Բորբոք ել, չորսով, գնացինք:

Անտառը բարձր էր, բորբոք նոճիներ էլին: Վոտներին
տակ չոր ճյուղերն էլին ճարճատում, իսկ ավելի շատ շվաք
տեղերում մամուռն էր բուսել և սուռնկի հոտ էր գալիս:

— Ես Անտառում սուռնկ ինչքան ասես կա, — ասում է
Վանկա Որեշկովը:

Մենք վազեցինք զանազան կողմեր, թռչում ենք մամուռ-
կարած թմբերի վրայից, մեկից մյուսը, թագնվում ենք միմյան-
ցից: Մեզնից ամեն մեկն ուզում է սուռնկ գտնի և, անպայման,
առաջինը, մյուսներից շուտ:

— Գտա՛, — հանկարծ կանչեց ժենկա կովալյովան և դեպի
մեզ վազեց: Նրա ձեռքին սուռնկ էր՝ մորթագույն գլխարկով,
փխրուն, իսկ վորը՝ լուցկու պես բարակ:

— Դա սուռնկ չի, — ասում է Վանկան, — դա թուռնավոր
է:

— Դու ինքդ ես թուռնավոր, — գոռում է ժենկա կովա-
լյովան: — Դե վճրտեղ են քո սուռնկերը, հը՞: Պարծենում էլիր
հա՛ պարծենում, — սուռնկեր ինչքան ասես:

Վանկան շուռ յեկավ, իբր թե չի լսում:

— Այո՛, — ասում է Կեշկան, — սուռնկ իսկապես վոր
ինչքան ասես կա:

Եստեղ իմ կատաղությունն էլ բռնեց:

— Դու, Վանկա, դես ու դեն մի ընկնի, — ասում եմ
յես, — ուր են քո սուռնկերը:

Վանկան չզիտեի ինչ անել:

— Ինչ եք դուք ել թափել վրես, — ասում է նա: Յես
սուռնկերի կառավարիչ չեմ: Դե, սուռնկերը չեն դուրս յեկել,
գնանք պատնեշը նայենք:

Անտառից դուրս յեկանք դեպի գետակը և գնացինք
ափով վեր, հոսանքին հակառակ: Գնում ենք ձորի յեզրով,
ներքեվումն էլ գետակն է հոսում: Կողքից շուրը պարզ է,

մաքուր, հաստակն ել ե յերևում - ամեն մի փոքրիկ քոլ կարելի յե նկատել:



— Այ, ինչ լողանալու տեղ է, — ասում ե կեշկան: — Վտաներս ինչ վոր ցավում են:

— Իմն ել, — ասում ե Փենկան:

Յես ել ուզեցի նույնը կըրկնել. մեկ ել՝ ամաչեցի: Վանկան քմծիծաղեց ե նայեց կեշկային:

— Թուլացար:

կեշկան նույնպես քմծիծաղեց:

— Հա՛, ինչ վոր չեմ ուզում գալ քո պատները նայելու: Յես ավելի լավ ե կսպասեմ ձեզ ետեղ, իսկ դուք գնացեք: Պառկեց խոտի վրա, վտաները վեր բարձրացրեց ե սկսեց յերգել:

— Սանդալիս մեջ քար կա, ասաց Փենկան ե նստեց նրա կողքին:

Մենք յերկուսով գնացինք: Գնում ենք, գնում, իսկ ծայրը չի յերեվում:

— Հը՞, հո չե՞ս նստում, — հարցնում ե Վանկան: — Գուցե քո սանդալի մեջն ել ե քար ընկել, հը՞:

— Չե, — ասում եմ, — վոչինչ: Իսկ վորտեղ ե քո պատները:

Շարունակում ենք գնալ:

— Գուցե դու հոգնե՞լ ես, — հարցնում ե Վանկան:

— Չե, ասում եմ, — վոչինչ:

Դարձյալ քայլում ենք, բայց պատները չկա ու չկա:

— Գուցե դու լողանալ ես ուզում, — հարցնում ե Վանկան:

— Չե, վոչինչ, — ասում եմ — կհասնենք, ետեղ ել կլողանանք:

— Իսկ ետեղ լողանալ չի կարելի, — ասում ե Վանկան: — Ետեղ արգելված ե: Յեթե ուզում ես, ետեղ լողանանք:



Յես ետեղ հասկացա թե, Վանկան ուր ե ծոռւմ. ինքը գնալ չի ցանկանում: Դե վոչինչ չես կարող անել. գնացինք, եսպես, թե ենպես, պետք ե հասնել:

— Յես, կարծեմ, սխալվել եմ, — ասում ե վերջապես Վանկան: — Պատները շատ ե հեռու, մենք չենք հասնի... Անցյալ տարի մենք եքսկուրսիայով՝ նավակներով յերկու որ գնացինք:

— Պարծենկոտ ես դու, Վանկա, — ա՛յ թե ինչ — ասացի յես կատաղած ե հետ դարձա: Վանկան ել իմ հետեվից:

Հասանք մենք են տեղը, ուր թողել եյինք կեշկային ու Փենկային: յերկուսն ել վտաները ջրի մեջ կախ արած՝ նստած են ափին, արևի տակ:

— Արի ասենք, վոր հասանք, — շշնջում ե ինձ Վանկան:

Մենք եղպես ել ասացինք — հասանք իբր թե մինչև պատները, իսկ պատները լավն եր, մեծ, ձուկ ել կարելի յե բռնել:

— Իսկ ճահիճը տեսա՞ք, — հարցնում ե կեշկան ե քթի տակին ծիծաղում, — Չծծեց:

— Չե, — ասում ե Վանկան, — մենք ճահճի մոտ չգնացինք:

— Ախր մենք մոտ յերեք ժամ ման ենք յեկել, — հիշեց Փենկան: — Մեզ չի՞ հասնի — արդյոք:

Վազեցինք լողեր: Յես Վանկայի հետ չեմ խոսում — չարացած եմ նրա վրա: կեշկան ել պակասը չի, միշտ ձեռք ե առնում, ե չես հասկանում՝ նա մեզ հավատաց, թե՞ չե: Իսկ ետեղ կարող ենք ե ուշանալ:

Հասանք տեղ, բակը դատարկ ե, նույնը ե տունը: Մենք կանգ առանք վախեցած: Յեվ հանկարծ ճաշարանից լսում ենք ամանեղենի զրնգոց ե ձայներ:

— Ճաշին ուշացել ենք. — ասում ե կեշկան:

Մենք ավելի մոտեցանք: Դռան մոտ կանգնած ե Սառան: Նշանակում ե՝ դռնից չի կարելի:

Տղերք, ա՛յ տղերք, — ասում է Վանկան, իսկ չեթե արանքից ներս մտնենք և սուսիկ-փուսիկ մեր տեղը նստե՛նք:

— Փորձիր մտնել

Շրջեցինք ճաշարանը, սողալով հասանք պատին: Չե, եղ վո՛նց կլինի: Չեռքն անցկացնել կարելի չե, վոտը՝ նույնպես, իսկ գլուխը չի մտնի:



— Իսկ սուսկալի ուտել եմ ուզում, — հառաչեց Փենկան և գնաց դեպի դուռը: Տղերք, չեկեք ուղիղ գնանք:

Մենք իրար հետեւից մոտեցանք դռանը, իսկ դռան մոտ կանգնած են Սառան և Կոստյան,

— Ահա՛ չեկան — ասաց Կոստյան:

— Ահա՛ չեկան, — բացականչեց Սառան:

Յե՛վ լերկուսն ել մեզ են նայում:

— Մենք, Կոստյա, ուշացել ենք, — բարա լիկ ձայնով ասաց Փենկա կովալյեվան: — Կարե՛լի չե ճաշել:

Կոստյան հոնքերը կիտեց:

— Դուք չորս հոգի չեք:

Չորս հոգի:

Կոստյան նայեց մեզ, յուրաքանչյուրիս վտաից մինչև գլուխ քննելով:

— Դե լավ, մա՛րջ տեղներդ: Յե՛վ վոր սա վերջինը լինի: Նոր եյինք մենք՝ նստել, չերը Կոստյան ձեռքը բարձրացրեց և գոռաց:

— Տղերք, թեյից հետո ընդհանուր լագերային հավաքույթի: Հասկացա՞ք: Իսկ հիմա մեռյալ ժամն է:

Կերանք և ամեն մեկս գնացինք մեր ննջարանը:

Մեր ննջարանը չորս հոգու համար է — յես եմ, Վանկա Որեշկովը, Կեշկա Մալազինը և Ֆիմկա Վերստան, ես նա յե, են ամենաբարձրը:

Ֆիմկա Վերստան խենթ է: Նա ասում է՝ քանի վոր սահ-

մանված է, ուրեմն պիտի քնել: Հանվեց պառկեց և քիթն ել կոխեց բարձի մեջ, իբր թե քնում է:

Իսկ մենք քնել չենք ուզում: Կեշկա Մալազինը նստեց յուսամուտի վրա և վոսները կախեց գուրս: Իսկ մենք ել փորով ընկել ենք պատուհանին և ելի դուրս ենք նայում: Բակում սաղերն են ման գալիս. ա՛յ թե նրանց առավոտվա պես վախեցնեյինք:

Հանկարծ ներքեվից ձայն՝

— Ենտեղ ո՞վ չի քնել: Անմի՛ջապես պառկեք:

Դա Սառան եր կանչում — մեզ նկատել եր:

Մենք ինչպես վոր կայինք, կոշիկներով պառկեցինք և խոսում ենք: Յեկավ Կոստյան, բարկացավ:

— Հանեք զգեստները: Մի՛թե դուք կարգը չգիտեք:

Հանվեցինք: Պառկել ենք: Պառկելուն պես քունս սկսեց տանել: Աչքերս փակեցի և չնայած վոր չեմ քնել, աչքերիս առաջ, կարծես թե յերագում, տեղերքն են յերևում ու գետաղը, և այստեղ ել, չգիտեմ թե ինչու, մայրս խնդրում է Կոստյային՝ դուք արդեն, ընկեր գեկավար, լավ մտիկ տվեք նրան:

Հանկարծ լսում եմ Կեշկայի նենդամիտ ձայնը՝

— Տղերք, իսկ պատենը վո՛նց է. մե՞ծ է. մի վերստ կլլնի: Վանկան անտարբեր պատասխանում է՝

— Չե, մի վերստ չի լինի, հինգ կամ վեց սաժեն կլինի:

Յես աչքերս բաց արի և տեսա Կեշկան ծիծաղում է: Չի հավատում, վոր մենք պատենը տեսել ենք:

— Իսկ ենտեղ ձուկ բռնու՞մ են, — հարցնում է Կեշկան:

— Մեր մոտ չբռնեցին, իսկ ընդհանրապես բռնում են: — ասում է Վանկան: Դե ի՞նչ ես դու ել կպել պատենը պոչից: Յեթե քեզ հետաքրքրում է, պիտի մեզ հետ գայիր:

— Յես կգայի, մենակ թե ենքան սուսկ եյի կերել՝ տրաքվում եյի, — ասում է Կեշկան:

Յես չկարողացա ինձ զսպել և սկսեցի ծիծաղել: Կեշկան ել է ծիծաղում: Իսկ Վանկա Որեշկովը հոնքերը կիտեց և սկսեց մատով պաստառները պոկել:

— Լավ է, յերբ մարդ տեղերին ծանոթ է, — նորից ասում է կեչկան: — Սուսկ ել կգտնի, պատնեշ ել և հանկարծ մի բան պատահելուց կարելի չե ճահճի մեջ սուզվել...

Մենք նորից ծիծաղում ենք: Բարձր ծիծաղել չի կարելի, մեռյալ ժամ է, և վորովհետեւ չի կարելի, ավելի շատ ենք ուզում ծիծաղել: Մինչև անգամ շոգեցիներ:

Ֆիմկա Վերստան շուռ յեկավ, գլուխը բարձրացրեց, նայեց մեզ վրա և նորից քիթը կոխեց բարձի մեջ:

Մենք մի քիչ լռեցինք: Ֆիմկան յերազում ինչ վոր բաներ մոմոացրեց և քթով շվիպացրեց:

— Տղերք, ա՛յտղերք, — շշնջում է Վանկան, ինչ կլինի, չեթե Ֆիմկայի վոտը կապենք մահճակալին:

Մենք բոլորս նույնիսկ վերթուանք, իսկ Վանկան մտավ մահճակալի տակը և պարանը բերեց:

— Վոչ թե մահճակալին, տղերք, — ասում է կեչկան, — այլ դռանը: Հենց վոր դուռը բաց անեն, նրան ել կքաշեն:

— Իսկ յեթե հանկարծ վոչ վոք չբացի, — ասում եմ յես: Վանկան չի լսում:

Ֆիմկայի վոտը պարանով փաթաթեց և պինդ կապեց:

կեչկան ել մյուս ծայրը դռանը կապեց և պարանը յերկաթալարի պես ձգեց:

Իսկ հիմա քնել, ասում է կեչկան:

Իմ ծիծաղս բռնում է:

— Վո՛նց է նա թռչելու, տղերք:

Հանկարծ դռան հետեվից քայլերի ձայն. քանի գնում, ավելի յե ուժեղանում: Մեկ: Դուռը քաշում են, Ֆիմկան վեր թռավ, ճչաց, իսկ դուռը դեռ քաշում են. Ֆիմկան ուղեց վեր թռչել, մեկ ել շրխկաց հատակին, վոտն ել դեպի վեր — պարանն է ձգում:

Դուռը բացվեց, Կոստյան ներս մտավ: Լուռ նայեց բորրին, լուռ կարեց պարանը և առանց խոսելու դուրս գնաց:

Թե՛լի ժամանակ շատ սուս եր: Ճաշարանում մեծերից վոչ վոք չկար, և վոչ վոք ել չէր աղմկում: Ողակավարները հայտարարեցին.

— Թե՛յից հետո հրապարակում լագերնիկները հավաքույթ է: Քննվելու չե կարգապահությունը խախտելու հարցը: Կոստյան մի բոպեյով ներս մտավ, մոտեցավ Վանկա Որեշկովին և ասաց՝

— Որեշկով, շուտ թե՛յդ խմիր և հավաքույթի սիգնալը տուր:

Վանկան գլխով նշան արեց, թե՛յը խմեց և վագեց Փանֆալրի հետեվից:

Մենք դուրս յեկանք բակը: Յես տեղս կանգնել չեմ կարողանում, զգում եմ, վոր դժբախտություն է գալու գլխիս: Կամ նկատողություն կանեն, կամ թե լագերից հետ կուղարկեն տուն... Իսկ ի՛նչպես գնալ չեմ ուզում: Յեվ ի՛նչ ամոթանք է:

Քայլում եմ յես ճանապարհով և տխուր մտքեր են գլխումս պտտվում: Հանկարծ մի ձայն եմ լսում:

— Ձե, դա չի ազդի... Տղերքը չեն հասկանա... Դա Սառայի ձայնն էր:


— Իսկ յես ասում եմ, վոր դա ամենալավ միջոցն է — թփերի հետեից պատասխանում է Կոստյան:

Յես կամացուկ թփերը հետ տվի ու տեսա — Սառան և Կոստյան կանգնած թափահարում են ձեռքերով: Յես սկսեցի լսել — չե՞ վոր անպայման մեր մասին են խոսում:

— Ինչպես կուղես, — ասում է Սառան: — Յես վոր լինելի, տղաներին ավելի խիստ կպատժեյի:

— Դա ամեն բանից ել խիստ է, — պատասխանեց Կոստյան:

Հանկարծ կոստյան լռեց և նայեց ուղիղ դեպի իմ կողմը — թփերը: Նկատե՞ց, թե վոչ: Յես ել չսպասեցի, գլուխս կուացրի և, ինչքան զոռումս կար, սկսեցի վագել: Առանց այն ել ուզում եմ խիստ պատժել, իսկ յեթե հիմա ել բռնվեմ, հո բոլորովին կորած եմ:



Վանկա Որեշկովը կանգնած է հրապարակի մեջտեղը: Հրապարակը մաքուր ավելած է, ավազ ցանած, իսկ բոլորովին ծայրից գիծ է փորված:

Այս գծով մենք թելի պես ուղիղ շարք ենք կանգնել — աշից ամենածայրը կանգնած է ամենայերկար Ֆիմկա Վերաստան, իսկ ձախից՝ Վովկան: Մենք մեջտեղն ենք — լես Կեշկայի կողքին եմ: Մենք բոլորս հիսուներկու հոգի ենք, իսկ հիսուներեք լերորդը ֆանֆարիստ Վանկա Որեշկովն է:

Համա յեվ Վանկա լես հա: Կարծես թե հիմա նրա մասին չեն խոսելու: Կանգնած է ուղիղ ձգված: Հետո բարձրացրեց ֆանֆարան, մոտեցրեց շրթունքներին և ավեց հավաքույթի ազդանշանը: Թշերն ուռցրած նվագում է, վողողում է հնչյուններով: Նվագեց վերջացրեց. հետո ֆասոնով իջեցրեց ֆանֆարը ծնկան, իբր թե տեսեք լես ով եմ: Իսկ իմ ու Կեշկայի վրա սկի բոլորովին ել չի նայում:

Յեկավ Կոստյան: Հոնքերը կիտած է: Յես արդեն գիտեմ, վոր յեթե Կոստյան շղայնանում է, շրթունքներն է սկրսում կրծոտել. իսկ յեթե նրան ծիծաղելի յե, մասներն անց է կացնում մազերի մեջ և սկսում է գզգզել: Նրա մազերը զանգուր են:

— Տղերք, — ասաց Կոստյան և շրթունքը շարժեց շղայնուրեն: — Մենք լագերում յերկար ենք ազրում: Վոչ, միայն առաջին որն է: Մեկնելուց առաջ մենք խոսե՞լ ենք լագերի կարգապահության մասին: Խոսել ենք: Դուք խոստացե՞լ եք ձեզ կազմակերպված պահել և յենթարկվել բոլոր կանոններին: Խոստացել եք:

Տղերքը լուռ են, իսկ իմ սիրտն սկսեց ուժեղ բաբախել: Յեվ ամբողջովին կարմրեցի, մինչեվ անգամ ականջներս սկրսկսեցին վառվել:

— Դե, իսկ դուք խոստումներդ կատարում եք:

Տղաներից, թե ով էր, մեկը պատասխանեց — «կատարում ենք»...

— Վոչ, չեք կատարում, — պատասխանեց Կոստյան: — Կա-

դերը լավ է, որինակելի լես այն ժամանակ, յերբ բոլոր պիոներները կանգնած են մեկի, և մեկն ել՝ բոլորի համար: Յեթե լագերում հինգ պիոներ կարգապահությունը խախտում են, մեղքն ընկնում է բոլորի վրա...

— Իսկ ի՞նչ է պատահել վոր, — ձայն ավեց շարքից յերրորդ ողակի ողակավար Կորենկովը:

— Հիմա կասեմ, — ասաց Կոստյան և նայեց ինձ ու Կեշկայի վրա՝ կարծես թե վոտքերիս տակի հողը շարժվեց: Հիմա մեր մասին պիտի խոսի:

— Մի քանի պիոներ, — ասաց Կոստյան... — ինքնակամ կերպով, մինչև նախաձաշը, գնացել են լողանալու, չնայած ասված է յեղել, վոր առանց ղեկավարների թույլատվության լողանալն արգելված է

«Ճիշտ է՝ մենք լողացել ենք: Նշանակում է մեր մասին ե»-մտածեցի լես:

— Պիոներներից վոմանք, — ասում է Կոստյան, — առավոտյան աշխատանքների դասավորման ժամանակ փախել են և վերադարձել են միայն ձաշին, աչն ել՝ ուշացումով:

«Մա ել մեր մասին ե»-մտածեցի յես:

— Պիոներներից վոմանք մեռյալ ժամին ծիծաղում է յին և խոսում, իսկ վոմանք ել ընկերների վոտները կապել է յին դռանը:

Տղաները ծիծաղեցին:

«Մա ել մեր մասին ե» — մտածեցի յես: Կեշկան կողքիս բղեց և սարսափած աչքով արեց:

— Այ թե հիմա մեզ հուփ կտան, հա, — շնչաց նա:

— Պիոներներից վոմանք, — շարունակեց Կոստյան, — զվարճանալու նոր ձեվ են գտել և սկսել են ամբողջ բակով սագերին քշել, վորոնք պատկանում են մեր պահակին:...

«Մա՛ ել մեր մասին ե. բոլորն իմացել է»

— Ծերուկն ասում է, — շարունակեց Կոստյան և նայեց ինձ, — վոր այսորվա ընթացքում այդ զվարճալի խաղը կրկնել են յերկու անգամ:

— Սու՛տ է՝ մի՛ անգամ, — կանչեցի յես և տեղն ու տեղը

հառաչեցի: Կեչկան ամբողջ ժողով կամթեց ձեռքս: Իսկ շատերը նորից ծիծաղեցին: Կոստյան բարձրացրեց ձեռքը և մատները խրեց իր գանգրահեր մագերի մեջ:

— Յես ալդ պիտներների անունը չեմ տա, — ասաց Կոստյան լուրջ, և բոլորն ել գազարեցին ծիծաղելուց: — Ով վոր եր, արդեն այնպես ել իմացավ: Յես ուզում եմ հարցնել տղաներից, թե ի՞նչ անենք մենք հիմա:

Տիրեց լուռթյուն: Իսկ իմ սիրտն ենպես եր բաբախում, վոր, իմ կարծիքով, Կեչկան լուռ եր:

21

— կանչել խորհրդի...

— Անել նախագգուշացում:

— Նկատողություն — խոսեցին տղաները:

— Իսկ նրանց հետ ինչ անել, վորոնք, այսոր առավոտյան, ամբողջ լագերով մին, դարձադալ եյին բարձրացրել գավաթների համար, — հարցրեց Կոստյան:

Սիրտս մի քիչ հանգստացավ: Իսկ մյուս տղաները լեցին: Առավոտյան չե՞ վոր բոլորն ել աղմկում եյին:

— Մենք կարող ենք ամենաչար պիտներներին ուղարկել սուն: Ուղարկե՞նք:

— Չե, — բացականչեցին բոլոր տղաները: Յես ել բացականչեցի, Կեչկան ել, մինչեվ անգամ Վանկա Որեշկովն ել կանչեց: — Չե:

— Դե, են ժամանակ, մենք կարող ենք տղաներին նկատողություն անել և հերթից դուրս աշխատանքներ տալ հավաքելու, — ասաց Կոստյան: Եղպես անենք, չե՞:

— Չե, բարձր կանչեցինք յես ու Կեչկան: Տղաներից վոմանք բացականչեցին՝ «չե»: Իսկ վոմանք ել «այո»:

— Յես մի ուրիշ բան եմ առաջարկում, — ասաց Կոստյան:

— Առաջին՝ մենք տղաներին նկատողություն ենք անում: Համաձայն եք:

— Համաձայն ենք, — կանչեցին բոլորը:

— Յերրորդ՝ մենք փոխադարձ յերաշխավորություն

ենք վերցնում՝ ողակը պատասխանատու յե ողակի յուրաքանչյուր պիտների համար, բոլոր տղաներն իրենք են հետեվում կարգապահությանը: Ճի՞շտ ե:

— Ճի՞շտ ե, — գոչեցին բոլորը:

— Յերրորդ՝ հիմա մենք ընտրում ենք կարգապահության հանձնաժողով: Այդ հանձնաժողովը բոլոր լագերականների համար կանոններ — յերկաթյա անխախտ որենք ե մշակում և հետեվում ե նրանց կիրառմանը: Համաձայն եք:

— Համաձայն ենք, — կանչեցին բոլորը:

— Են ժամանակ յեկեք հանձնաժողովի անդամներ նշենք: Դուք թեկնածուներ ունե՞ք:

Տղերքն այս ու այն կողմը նայեցին և սկսեցին մեկը մյուսի անունը տալ:

— Իսկ յես առաջարկում եմ, ալ թե ինչ, — ասաց Կոստյան, — պետք ե վերցնել ավելի ազատ և, միեփույն ժամանակ, ախարի տղաներին: Այ, որինակ...

Նա շարքով նայեց մեզ:

— Դե, ահա Պետրովին...

Պետրովը յես եմ:

Հետո Կոստյան նայեց Կեչկային:

— Մալազինին:

Նայեց Վանկա Որեշկովին:

— Յեվ Որեշկովին...

Հետո, նկատելով, վոր տղաները զարմացան, ավելացրեց՝

— Յես կարծում եմ այս տղաներին հեշտ կլինի դարձադալները ու անկարգների հետ զլուխ դներ: Միայն պետք ե ավելացնել աղջիկներից վորեվե մեկին, նու... նու... թեկուզ, ժենյա Կավալյովային, համաձայն եք:

— Համաձայն ենք:

— Են ժամանակ, քվեարկում ենք: Ով կողմնակից ե, ձեռք բարձրացնի:

Յես ձեռք բարձրացրի, բայց Կեչկան թեքս քաշեց. իսկ Վանկա Որեշկովը հարցրեց՝

— Իսկ ով ե նխտերը հրավիրելու:

— Նախագահ առաջարկում եմ Որեշկովին, — ասաց Կոստյան: Ով կողմնակից է, ձեռք բարձրացնի: Ընդունված է:

Մենք հավաքվեցինք ճաշարանի հետևի թփերի մեջ: Վանկա Որեշկովը նստել էր կոճղի վրա, իսկ յես ու Կեշկան պռակել էյինք փորներինս վրա, ժենկա Կովալյովան ել տաճկաստանցու պես ծալապատիկ նստել էր:

Գրել մեզ համար յերկաթյա որենք, բոլորովին ել հեշտ չի: Մենք յերեք ժամ մլուլ յեկանք, և բոլոր յերեք ժամն ել վիճում էյինք միմյանց հետ:



Ահա թե ինչ գրեցինք մենք՝

Յերկարյա որենք

բոլոր պիտներ լագերականների համար

1. Չարություն չանել, սագերի հետեվից չընկնել:
2. Սեղանի շուրջը բարձր չխոսել: Հավելյալ վորեվե բան կամ հաց ուզողը ձեռք բարձրացնի:
3. Լագերում յեղած ժամանակաբաժանում բոլոր ամանեղենները հաւովել ընդհանուր յեվ չպահանջել իր գազաթը՝ պիտներները սեփականասերեր չեն, պիտի կուխեկսիվ կերպով ապրեն:
4. Լողանալ միայն դեկավարի թույլսփությամբ:
5. Հեռանալ սիայն մրնչեվ անստուակն ու փայտասան հետեվի ցանկապասք, իսկ ով վոր ուզում է ավելի հեռու գնա, թույլսփություն ինդրել:

6. Կասարել ամբողջ որվա ռեժիմը, չուշանալ, մեռյալ ժամին չաղմկել յեվ միմյանց հետեվել, վոր չարություն — անկարգություն չանն:



7. Գործադրվում է փոխադարձ յերաւխալփորություն — ողտկը պաս սախանասու յե իր ողտկի յարախանչուր պիտների վարքի համար:

9. Բոլոր անուղղելի չար-անկարգները հետ կուղարկվեն տուն:

Յերեկոյան լագերի հանդիսավոր բացումն էր: Մենք բոլորս հավաքվեցինք բակում, բոլորն ել փողկապները կապել էյին: Բակի մեջտեղում մի մեծ խարույկ վառեցինք: Վառում էյինք չոր ցախ: Բոցը բարձրանում էր ցանկապատից ել բարձր, և բոլորի գեմքերն ել կարմիր էյին յերեվում:

— Տղերք, — ասաց Կոստյան, — մենք լագերը բաց ենք անում: Մի ամսվա լագերային կյանքում պիտներները պիտի սովորեն ապրել ու աշխատել հաշտ, պիտի առողջանան, աչրվենսեփանան, կուխակրթական և հանարակական ողտավետ աշխատանքներով ոգնեն մտտակա կուխողին, մենատնտես աշխատավորին, — վոր գլխավորն է, պիտներներին — մեր զնալուց հետո մենք պետք է գլուղում թողնենք պիտներական ու մեծ կուխեկտիվ:

Վանկա Որեշկովը կարդաց յերկաթե որենքը, և տղաները հաստատեցին միաձայն:

Հետո բարձրացրին զըրշակը: Իրոշակի մտա կանգնեցին Կոստյան և յերկու տղա: Վանկա Որեշկովը նվագեց Փանֆարի վրա, իսկ թմբկահարներն ել սկսեցին թմբկահարել:

— Կ-ե ց-ց է լա-գե-րը, — գոչեցինք մենք խմբով: — Ուռն, ուռն, ուռն:

Իրոշակը ձողի վրայով դանդաղ սկսեց սողալ վեր, հետո

դեմ ընկալ թոկին և կանգ առավ, իսկ մենք բորբս կանգնած՝
պատիվ ենք տալիս գրողակին: Տղերքը քաշում են, քաշում,
մինչեւ անգամ կարմրեցին գոռից, իսկ գրողակը չի գնում ու
չի գնում: Եստեղ Կոստյան վերցրեց-ուղղեց թոկը, գրողակը
թռավ վեր և բացվեց քամու առաջ:

Հետո մենք Փշանգ բաց թողինք: Փշանգն եսպես է բաց
թողնվում. առաջ բոլորը խփում են իրենց շրթունքներին և
կանչում՝ ա-ա-ա, հետո խփում են իրենց ծնկներին, հետո ծափ
են տալիս և բոլորը խմբով կանչում՝

— Բ՛նձ պիտներ, բ՛նձ պիտներ, բ՛նձ պիտներ, կեցցե՛,
լա-դե-րը: Ուռռա՛:

Ուռան կարելի է կանչել ենքան, մինչեւ վոր ձանձրա-
նաս:

Մենք յերեք անգամ Փշանգ բաց թողինք, և բավականին
ծիծաղեցինք, վորովհետեւ սոսկալի աղմուկ է ստացվում: Բացի
գրանից, տղաներից մի քանիսը մոռանում են թե ինչ պիտի
անեն և շփոթում են — բոլորը կանչում են՝ ա-ա-ա, իսկ նրանք
ծափ են տալիս:

Սարույկն սկսեց հանգչել, մենք ուզում էլինք ելի, ցախ
ավերացնել, բայց Կոստյան ասաց, վոր քնելու ժամանակն է:

— Վաղը, — ասաց Կոստյան, — առավոտվանից սկսվում է
սրվա խիստ սեփմը: Ընկեր Որեշկով, քնով չանցկացնեք, դու
պիտի ժամն ութին փչես արթնանալու ազդանշանը:

24

Լույսը բացվեց թե չե, արթնացա արեվից: Պառկեցի լես
արեվի տակ: Յեւ արեվն ինձ ենպես տաքացրեց, վոր նորից
քունս սկսեց տանել: Յես կծկվեցի ու վորոշեցի՝ «մի կես ժամ
ննջեմ, մինչեւ ազդանշանը դեռ ժամանակ կա»:

Յեւ պինդ քնեցի: Արթնանում եմ՝ սենյակը դատարկ է,
իսկ բակից ձայներ են գալիս: Քնով եմ անցել, ա՛յ քեզ յեր-
կաթե որենք:

Համարլա թռչում էյի յես աստիճաններից ներքեւ: Լավ
էր վոր գլուխս չկտարեցի:

Պնդակի պես դուրս թռա բակը, իսկ տղերքն արդեն շարք
են կանգնել մարմնամարզության համար:

Ե՛խ, դու հանձնաժողով, — կանչում են տղաներն ու ծիծա-
ղում:

— Նախաճաշե՛լ եք արդեն, — հարցնում եմ յես տղաներին:
Քունը գլխիս մոռացել եմ թե առաջ վորն է՝ մարմնամարզու-
թյունը, թե՛ նախաճաշը: Իսկ տղաները հոհոում են և ասում՝
«վոչ միայն նախաճաշել ենք, այլև մինչեւ անգամ ճաշել ենք
էլ»:

Մարմնամարզությունը դեկավարում է Սառան: Սառան
կանգնում է առաջ և շարժումները ցույց տալիս, իսկ մենք
բոլորս էլ կրկնում ենք: Ձեռքերը վեր, ձեռքներն առաջ, ձեռ-
քերը կողմ: Նորից վեր, նորից առաջ, նորից կողմ: Կողքից
յերեվի շատ սիրուն է: Հետո վտաքերի վրա իջնելը: Իջնելի
ավելի դժվար է, վորովհետեւ ձեռքերով հենվումես կողերիդ
և ուղիղ կանգնում: Յես հենց նոր էյի իջել, Կեշկան ինձ
շշնջում է՝

— Նայի՛ր, Վովկան գետնին է հենվել:

Յես գլուխս յերկարացրի, վոր նայեմ և իրոք՝ ճիշտ էր:
Վովկան մի ձեռքով հենվում է գետնին, վոր վայր չընկնի:
Յես՝ ձգվեցի, վոր նայեմ, բայց ինքս էլ չկարողացա ինձ պահել
և ուղիղ քթովս տնկվեցի ավազի մեջ:

— Ա՛յ քեզ ճարպիկ, — ասաց Սառան: — Գուցե դեռ քնից
չե՞ս դարձնել:

Իսկ տղերքը խելագարի պես հոհոում են. դե ծիծաղելի
ինչ կա վոր:

— Քիթդ հողոտ է, — ասում է Վանկա Որեշկովը — դու, եզ
ինչ է, քթովդ հո՞ղ ես փորել:

25

Մեր ողակը կարգադրություն էր ստացել ճաշարանում
հերթապահելու:

Ճաշարանում աշխատանք շատ կա՝ պիտի ամանները բե-
րել, սեղանը սարքել, դնել յուրաքանչյուրի պատասաբաղը,

դանակը, գդալը, ամանը: Պիտի հացը կտրտել, դարսել հացի փոքրիկ զամբյուղների մեջ և դնել սեղանի վրա, այնպես, վոր ամեն մի պիտներ կարողանա ձեռքն ազատ յերկարացնի զամբյուղին: Պիտի ստուգել՝ աղամաններում աղ կա՞, և վորտեղ չկա, աղ ավելացնել:



Հերթապահները սեղան չեն նստում: Մենք ճաշում ենք հետո, յերբ արդեն բոլորը ճաշում վերջացնում են: Դաշա մորաքույրը մի մեծ պղինձ սուպ է բերում ու դնում առանձին սեղանի վրա: Այստեղ գտնվում են նաև սուպի ամանները: Մենք սուպը լցնում ենք ամանների մեջ և տանում — բաժանում բոլոր պիտներներին: Յերբ տղերքն ուտում վերջացնում են, տալիս ենք հավելյալը, յեթե մեկն ուզում է:

Ամանով սուպը տվի Վովկային: Աչքս չթարթած, տեսնեմ՝ Վովկան ձեռքը բարձրացրել է:

— Ի՞նչ ես ուզում, — հարցնում եմ յես:

— Հավելյալ:

— Մի տես, ամենից փոքրն է, իսկ նրան մեծ ամանը հերիք չի անում: — Յես ելի կես աման լցրի և տվի Վովկային: Ելի աչքս չթարթած՝ նա նորից ձեռք է բարձրացնում:

— Ի՞նչ ես ուզում:

— Հավելյալ:

— Ախր յես քեզ տվի:

— Իսկ դու քիչ ես տվել:

Յես վերցրի ամանը, բայց ավելացնել վախեցա: Գնացի Կոստյայի մոտ:

— Կոստյա, Վովկան յերրորդ ամանն է խնդրում: Նա չի տրաքվի:

Իսկ Կոստյան ծիծաղում է:

— Վովկան ամեն ոք յերեք աման է ուտում, չնայած վոր փոքր է:

Այ քեզ մեծափոր: Յես նրան տվի յերրորդ ամանը և

նայում եմ միթե պիտի ուտի: Վոչինչ. կերավ և դեռ լիզում է: Եդքանը նա վհրտեղ է տեղավորում:

Սկսեցինք բաժանել յեկրորդը — մսե կատլետներ՝ գետնախնձորով: Վովկան նորից ձեռքը բարձրացրեց՝

— Ավելացնել կարե՛լի յե:

Եստեղ Կոստյան ել մոտեցավ՝

— Վովկա, փորդ չի ցավի:

— Չե:

— Ախր դու միթե քաղցած ես:

— Չե: Կատլետները շատ համեղ են:

Մի կատլետ ել տվի նրան: Այ քեզ շատակեր:

Ճաշից հետո մենք ամանեղենները տարանք խոհանոց և նստեցինք ճաշելու: Մեզ հետ ճաշում էյին դեկավարներն ու Դաշա մորաքույրը:

— Կոստյա, — հարցրի յես, — գուցե Վովկան հիվանդ է, վոր եդքան շատ է ուտում:

Իսկ Դաշա մորաքույրն ասում է՝

— Նա հիվանդ չի, այլ՝ ազահ: Յես նրան անցյալ ամառվանից եմ հիշում: Նա չնայած դեռ փոքր էր, բայց լազեր եր գնում: Յեվ կլի բոլորից շատ եր ուտում: Ամեն անգամ հավելյալ եր խնդրում:

Յերեկոյից արդեն հայտարարված եր՝

— Վաղ առավոտ ամբողջ լազերը ճանապարհվում է կոլխոզ՝ կապ պահպանելու համար:

Կոլխոզը լազերից չորս վերստի վրա յե: Մենք մեզ հետ վերցրինք ջուր՝ ճանապարհորդական շշերի մեջ, հաց, վարունդ և սրբիչներ, վորպեսզի ճանապարհին լողանանք: Բացի դրանից, մենք գյուղական տղաներին հետներս տարանք վորպես նվեր՝ շաշկիներ, ռազմածովային խաղը և «Լենինյան կայծերը»:

Տղաները մեր գալու մասին գիտեյին — Կոստյան դեռ յերեկ եր յեղել գլուզում:

Մոտեցանք մենք գյուղին — բարբր ձգվեցին, մեր թմբկահարները թմբկահարում են մեր փողահարները փողահարում են, իսկ կոստյան գոռում է՝

— Մեկ, յերկու, ձախ, մեկ յերկու, ձախ:

Մենք դիմափորության ելինք սպասում, իսկ դիմափորելու վոչ վոր դուրս չեկավ: Տղաները փողոցում խաղում էին՝ բարբր փոշու մեջ, վորովհետև ճանապարհը սոսկալի փոշոտ է:

— Պարոնների զավակները կաթի յեն յեկել — գոռաց մի աղա և չերկու մտար բերնին սուլեց:

Բոլորը մեզ շրջապատեցին և աչքերի սակից նայում են հոնքերը կիտած:

Ես ինչ է, դուք՝ տեղք — ասում է կոստյան: — Ինչու յեք վատ դիմափորում:

— Շատ ենք դիմափորել, հերիք է, — ասում է աղան:

Այտեղ Ֆիմկան դուրս յեկավ առաջ — նա նշանակված է ճառ արտասանելու համար: Ֆիմկան շփոթվեց, սկսեց խոսել այնպես, ինչպես պատրաստվել էր, միաժամանակ էլ աղաներին էր նայում, թե նրանք ինչ են անում:

Իսկ աղաները լուռ կանգնած են:

— Մենք ձեզ հետ մտերմանալու համար ենք յեկել, — ասում է Ֆիմկան: — Յե՛վ ձեզ նվեր ենք բերել յերկու խաղ և «լենինյան կայծեր»:

Եստեղ աղաները ծափահարեցին, բայց վոչ ուժեղ:

— Իսկ ձեզ մոտ՝ գյուղում, պիտներներ կան, — հարցնում է Ֆիմկան:

— Չկան, — պատասխանում են աղաները: — Մեզ մոտ վոչինչ չկա, մենակ մի դեկավար է:

— Եզ, վճնց թե, — գարմանում է Ֆիմկան: — Ղեկավար կա, իսկ պիտներներ չկան:

— Նրան էլ նորերս են ընտրել, — պատասխանում են աղաները: — Նա գեռ ժամանակ չուներ: Մեզ մոտ յերրորդ դեկավարն են ընտրում. իսկ խումբը մինչև հիմա չկա:

— Իսկ դուք ուզում եք պիտներ գտնալ, — հարցնում է Ֆիմկան:

— Չէ, չենք ուզում, — կանչեց են աղան, վորը յերկու մատով շվվացրեց: — Չենք ուզում:

— Իսկ ինչու չեք ուզում:

Տղերքը լսում են: Հանկարծ մի աղա դուրս յեկավ առաջ, մի փոքրիկ աղա յեր, բայց, ինչպես յերեվում էր, հասակով էր միայն փոքր, իսկ խոսում էր շատ ներդաշնակ:

— Դե ինչ, — ասում է, — ամեն ամառ մեզ մոտ պիտներներն են իջեվանում, իսկ ինչ ոգում: Անցյալ տարի քաղաքի պիտներները նույնպես գալիս էին: Մենակ թե մեզ մոտ չեյին գալիս, այլ կաթ խմելու: Ոգներով չոգնեցին, գեռ մեր վեզերն էլ կորցրին: վերցրին խաղալու և կորցրին:

— Իսկ մենք կաթի համար չենք յեկել ձեզ մոտ, — ասում է կոստյան: — Մենք ձեզ չենք համոզի, մենք գործի մեջ մեզ ցույց կտանք: Իսկ առաջժմ յեկեք ճանոթանանք:

— Ինչ կա վոր, — ասում է փոքրիկը: — Ծանոթանալ կարելի յե: Ձեզանից գործկի-«քաղաք» ո՞վ է խաղում:

Եստեղ Վանկա Որեշկովը դուրս թռավ՝

— Խաղանք:

Նրա հետևիցն էլ մյուսները: Փոքրիկը դարձավ, վերցրեց կոճղիկները և սկսեց քաղաք կառուցել:

— Պավլունկա, — կանչում են նրան գյուղի աղաները: — Դու ավելի լավ սարքիր, ավելի լավ: Քաղաքացիներ են նրանք, — գիտուններ:

Վանկա Որեշկովն առաջինը դուրս յեկավ: Փայտը Բարձրացրեց, նշան բռնեց, բռնեց և հանկարծ իջեցրեց:

— Դե արի, — ասում է, — առաջ դու: — Դուք տանտերերն եք, մենք՝ հյուրերը:

— Հյուրերին հարգանք, — պատասխանում է Պավլունկան: — Մկսեք:

Վանկան բարձրացրեց փայտը, շարտեց, թռավ փայտը շվվոցով, մենակ վոչ թե քաղաք, այլ ճանապարհի, առվի վրայով ուղիղ դեպի թփերը:

— Վերցրեք փայտը, — հրամայեց Պավլունկան իրենց

տղաներին: — Իսկ հիմա տես թե վոնց պիտի խաղալ, — ասաց նա Վանկային:



Վերցրեց փայտը, վոտը հետ առնեց, մի աչքը կկոցեց և շրթունքը կծեց: Թուով փայտը գետնի յերեսով և ուղիղ դեպի քաղաք. ամբողջ քաղաքը ցիրուցան չեղավ, միայն փոշին բարձրացավ:

— Այ թե վոնց են խաղում մեզ մոտ, — ասաց Պավլունկան և մի կողմ քաշվեց:

— Իսկ դուք բասկետբոլ խաղում եք, — հարցրեց Վանկան:

— Մենք գնդակ չունենք, — ասացին տղաները: — Իսկ դուք չեկեք մեզ մոտ լագեր, կխաղանք, — ասաց Վանկա Որեշկովը:

— Դու խաղ արա, խաղ արա, — ասաց Պավլունկան և նոր քաղաք սարքեց:

Վանկան վերցրեց փայտը, մի վոտը հետ առնեց, աչքը կկոցեց, շրթունքը կծեց և փայտը շարտեց գետնի վրայով: Նորից փոշի բարձրացավ — քաղաքը քանդեց:

— Իսկ մենք, ա՛յ թե ինչ անենք, — ասում է Պավլունկան: — Մենք միասին կխաղանք յերկու խմբով՝ խմբի կեսը մեզնից, կեսը՝ ձեզնից: Ո՛վ է ուզում ինձ հետ:

Մենք բաժանվեցինք յերկու մասի — Պավլունկան իր խմբի մեջ վերցրեց Վանկա Որեշկովին և ելի լավ խախացողներին: Սկսեցինք խաղալ: Պավլունկայի խումբն ամեն անգամ հաղթում էր:

— Ճիշտ չեք բաժանվել, — կանչեցին տղաները:

— Ինչը ճիշտ չի: Հավասար յերկու կես է — ասում է Պավլունկան:

— Ճիշտ է, հավասար են, — գոռում է Վանկան:

Խաղացինք յերեք ժամի չափ, մինչև վոր հոգնեցինք:

Իսկ եստեղ մոտեցան մեզ կոստյան և նրա հետ ել մի ինչ վոր կաշվե պինջակով, մորուքավոր մարդ:

— Սա կոլխոզի քարտուղար, քեռի Պրոխորն է, — ասաց կոստյան: Նա հենց նոր ինձ ցույց էր տալիս թե ինչ որինակելի խոզանոց են կառուցել: Ուզում էք, ձեզ ել ցույց տանք:



Մենք բոլորս ել գնացինք խոզանոցը՝ քեռի Պրոխորի հետ միասին. գյուղի տղաներն ել նուչնպես:

Յեկանք հենց ուղից խոզուկներին կերակրելու ժամանակ: Յերկու կին պատի հետևը՝ յերկար տաշտերի մեջ կեր էյին պատրաստում: Իսկ խոզուկները շատ են — մոտ հարյուր հատ: Յեվ բոլորն ել խմբվել են մի կողմի վրա, դռան մոտ. յուրաքանչյուրն ուզում է առաջ խցկվի, իսկ հենց վոր կինը դուռը բաց արեց, խոզի ձագերը նրան քիչ էր մնում վայր զցեյին: Ճվճվում են, կովում, խցկվում դեպի տաշտը:



Յեվ հանկարծ, միանգամից լուռթյուն տիրեց, միայն լավում է թե ինչպես խոզուկները ձմձմացնում էլին, և կանաչք նրանց վրա գոռում:

Մի րոպեյում խոզուկները մաքրագարգեցին, իրենց կերը և դանդաղ շորորարով հետ գնացին դեպի բակը:

— Դե, իսկ հիմա, — ասաց քեռի Պրոխորը, — նայեք խրճիթընթերցարանը: Մի քիչ նեղվածք է. վոչինչ, մյուս տարի ակումբ կկառուցենք:

— Իսկ ձեզ մոտ ուզի՞ս կա՞, — հարցրեց Ֆիմկան:

— Չկա, — պատասխանեց քեռի Պրոխորը:

Անցյալ տարի ունեյինք, բայց կոտրել ենք: Իսկ հիմա միշտ ել ժամանակ չունենք զբաղվելու եզ...

Մենք քաղցեցինք. ձաշելու ժամն է: Նստեցինք նստարաների վրա և սկսեցինք մեր հացն ու վարունգն ուտել:

— Իսկ կաթ չեք ուզում, — հարցնում է են տղան, վոր
յերկու մատով սուլեց:

— Մենք կաթի համար չենք յեկել, — մեր բոլորի կողմից
պատասխանեց Ֆրիմկան: — Իսկ դուք, տղերք, յեկեք մեզ մոտ
լագեր, նորից կսկսենք խաղալ:



Գյուղական տղաները յեկան մեզ մոտ, առավոտյան նախա-
ճաշից հետո:

Յեկել են տասներկու տղա, իսկ բոլորի առաջից
քայլում է Պավուլնկան և են, վոր յերկու մատով շվվացրեց՝
հովիվ Գրիշկան:



Մենք «արևի վաննաներ»
եյինք ընդունում: Պառկել ելինք
մերկ գետի ափին՝ ավազի վրա:

— Կոխոզնիկները, — գոռաց
Վանկա Որեշկովը:

Մենք ահա պիտի վեր թռչե-
լինք և վազեյինք տղաների մոտ:
Բայց Կոտայան սուլեց սուլիչով՝
արևի վաննաների ժամանակ տե-

ղից վեր թռչել չի կարելի:

Կոխոզնիկները հանեցին շապիկները և նստեցին մեր
կողքին: Վանկա Որեշկովը ժամանակ գտավ բավականին ստեր
փշերու Պավուլնկային, իսկ նա ել նրանից պոկ շեր գալիս:

Հանկարծ Կոտայան նորից սուլեց՝ լողանալ: Մենք անմիջա-
պես թռանք շուրը — հանվելու կարիք չկար:

Մեր գետակը հրաշալի յե: Մեր ափը ավազոտ է, և հատակն
եղ շատ հարթ: Իսկ մյուս ափն սկի չես ել գանի — գետակի
մեջտեղից սկսվում են յեղեգները: Տղաներից ավելի համար-
ձակները լողում են դեպի այն կողմը և լողանում յեղեգների
մեջ՝ ինչպես անտառում: Իսկ յես վախենում եմ, — կարծես թե
մեկը ջրի տակից բռնում է քեզ և քարշ տալիս ներքև:

— Դե, սպա, քաղաքացիներ, ո՞վ է լողում դեպի յեղեգ-
ները, — կանչեց Պավուլնկան և առաջինը լողաց առաջ:

Վանկա Որեշկովը հետ չի մնում, — լողում է կողքկողքի:
— Ի՞նչ է, վախենում եք, — կանչում է մեզ Պավուլնկան:

— Ել, դուք, — կանչում է Վանկա Որեշկովը: — Ի՞նչ եք
ափին մրուլ գալիս:

Կատաղությունս յեկավ: Տես մի, ինչպիսի հերոս է:

Յես գոռեցի և սկսեցի նրանց հասնել: լողացի մինչև
յեղեգները, իսկ ենտեղ վոչ Վանկան և վոչ ել Պավուլնկան
կան, յերևի ավելի առաջ են գնացել դեպի ափը: Հենց նոր
ելի լողալով անցել խորքը — ամենա խիտ տեղը — հանկարծ
չրոփ, ուղղակի յերեսիս, ինչ վոր թաց լայրծուն բան կպավ:
Յես բղավեցի, շուռ յեկա, նորից ելի յերեսիս — շրոփ: Յեվ



նորից, նորից ու նորից: Յես բղավում եմ և վերջին ուժերս
եմ գործադրում յեղեգներից մաքուր շուրը դուրս գալու համար:
Յեղեգները չեն վերջանում, այլ ավելի խտանում են, շուրն
ել ավելի կեղտոտում — և հանկարծ ուղիղ ծնկներիս տակն
ավազ: Հատակն է: Մա յես դեպի ափն եմ լող տվել: Իսկ
մեջքիս հետևը հոճում են: Եստեղ յես ամեն ինչ հասկացա:
Պավուլնկան և Վանկան թագնվել են յեղեգների մեջ: Հենց
մի քիչ լողալիս եմ յեղել առաջ, նրանք յեղեգը ձգելիս են
յեղել և բաց թողել: Իսկ յեղեգն ել ուղղվում եր և ուղղակի
յերեսիս:

— Հիմարներ, — կանչեցի յես: — սպասեք, յես ձեզ...

Յեվ հանկարծ, շրոփ, ուղղակի յերեսիս տղմի հետ խառը
խոտի մի ամբողջ գունդ:

Յես չկարողացա ինձ պահել և լաց յեղա: Մենակ յես
ի՞նչ կարող եմ անել յերկուսի դեմ:

Դուքս յեկա յես ափ՝ փնտրելու գետի ավելի նեղ տարա-
ծուծյունը. լայն տեղից չեմ կարող լողալ — հողմեր եմ:

28

Ճաշից առաջ լսում եմ, վոր Վանկան Պավլունկայի հետ
ի՞նչ վոր բանի մասին փոփսում են: Հետո Պավլունկան գնաց,
իսկ Վանկան, կարծես թե վոչինչ չի պատահել, վերադարձավ
լազեր:

Յես սկսեցի Վանկային հետևել, չի՞ մտածել արդյոք մե-
ռյալ ժամին փախչելու: Վոչ, Վանկան պառկեց քնելու և անմիջա-
պես խռմփացրեց: Արթնացա յես թեյ խմելուց մի քիչ առաջ,
Վանկան դեռ քնած է ու խռմփացնում է: Նշանակում է
թեյից հետո չե փախչելու:

Յեվ, իսկապես՝ թեյից հետո Վանկան անհետացավ: Յեվ
ենպես ճարակորեն, վոր յես նույնիսկ չնկատեցի, թե ուր:
Մենակ տեսա, վոր նա գրպանը դրեց լուցկիմեր և գրչահատ
դանակը:

Յես կեշկային ասում եմ՝

— Ուզում ե՞ք բռնենք:

— Ուզում եմ:

Թե ուր գնանք, յերկուսս ել չգիտենք: Հանկարծ մտաենում
է մեզ ժենկա կովալյովան և չարախինդ ասում՝

— Ընկերո՞ջդ եք կորցրել:

Յես նկատում եմ, վոր ժենկան ինչ վոր բան գիտի:

— Իսկ քո ի՞նչ գործն է, — պատասխանում է կեշկան:

— Ենպես, վոչինչ, — ասում է ժենկան: — Դե դուք ինձ
բանի տեղ չեք դնում, յես աղջիկ եմ: Դուք անա ինձ հետ
չեք ուզում ընկերություն անել, իսկ Վանկան ել ձեզ հետ չի
ուզում:

— Մենք քեզ հետ ուզում ենք ընկերություն անել, —
ասում եմ յես, — իսկ դու տեսել ես վորտեղ է Վանկան:



— Տեսել եմ: Գնանք, մենակ ինձ չմտնեք:

ժենկայի հետ գնացինք անտառ: Նա գնում է և քիթը
քաշում, կարծես թե հոտոտում է:

— Դու, եղ ինչ ա, վորսի շուն ես, ժենկա, — հարցնում
է կեշկան:

— Ենպես, վորսի շան պես, — պատասխանում է ժեն-
կան: — Հենց վոր ծխի հոտ առնեք, ասեք:

Գնացինք, գնացինք, հանկարծ ծխի հոտ առանք: Մենք
հոտով շարունակեցինք գնար: Անցանք մի քիչ, լսում ենք
ձայներ և ինչպես խարույկի վրա ճղներն են ճարձատում:
Քիչ հետո խարույկն ել տեսանք, իսկ խարույկի կողքին՝
նստած Վանկային և Պավլունկային: Պավլունկան կրակի վրա
ինչ վոր փայտ է բռնել, իսկ Վանկան ել մի ուրիշը գրչահատ
դանակով կտրում է:

— Ոհո-հո, դավադիրներ, — կանչեց կեշկան:

Իսկ Վանկան դարձավ դեպի մեզ և հանգիստ ասում է՝

— Ա, եղ դ՞ուք եք: Նստեք մեզ մոտ, տղերք, մենք եստեղ
փայտեր ենք նախշում: Տեսեք: Կարող ենք ձեզ համար ել անել:

Վանկայի վրա յեղած իմ բոլոր կատաղությունն անցավ:

— Իսկ վ՞՞նց եք դուք անում, — հարցնում եմ յես:

Վանկան մի կողմ դրեց դանակը և տակիցը հանեց պա-
տրաստի, նախշած փայտը:

— Շատ հասարակ, ահա թե վոնց. առաջ նկարում ենք վրան, հետո՝ այրում, հետո ել՝ կաշին պոկում — և ահա պատրաստ է:

Կյանքը լազերում ընթանում էր առաջվա պես: Մենակ բոլոր տղաներն էլ փայտեր ձեռք բերին: Բոլորն էլ սովորեցին փայտեր սարքելը, բայց ամենից լավը շինում էին Վանկան և Պավլունկան, վորովհետև նրանց մոտն էր գտնվում բարակ լեզվակով Վանկայի դանակը: Վանկան և Պավլունկան կարողանում էին փորագրել և՛ ազգանուններ, և՛ լազերի անունը, և՛ դանազան նախշեր:

Վանկան ինձ համար, ընկերաբար, մի փայտ սարքեց՝ իմ ազգանունով. նույնը և Կեշկային: Ժենկա Կովալյովան փայտն ստացավ չերկու հատ կանֆետով: Իսկ մյուս տղաներին, փայտի համար, Վանկան ստիպում էր զնալ կամ կոպերատիվ կանֆետի, կամ փոստ՝ նամակը փոստարկղը գցելու, կամ էլ իր փոխարեն, գետնախնձոր մաքրելու, յեթե ինքը հերթապահ էր խոհանոցում:

Տղերքը Վանկային անվանեցին՝ «միայնակ տնայնագործ»: Բայց կոպերատիվ էլին վաղում, խոհանոցում հերթապահում էլին միայն նրա համար, վորովհետև նրանցից չուրաքանչյուրն ուզում էր մի մի նախշած փայտ տանել տուն:

Միայն Ֆիմկա Վերստան էր, վոր փայտերով չէր զբաղվում: Նա մինչև անգամ մեզ հետ զբոսանքի չէր գալիս և իրեն առանձին էր պահում մեզնից: Առաջինը նկատաց այդ ժենկա Կովալյովան:

- Ֆիմկան են ինչ ա՛ սարքում, — հարցրեց նա ինձ:
- Վերտեղ:
- Վոնց թե վորտեղ: Հենց ձեզ մոտ, ձեր սենյակում:
- Մեր սենյակում:

Յես վոչինչ չգիտեյի: Հարցրի Վանկային ու Կեշկային: Նրանք էլ չգիտեյին: Մենք բոլորս էլ վազեցինք մեզ մոտ — սենյակը. Դուռը կողպ էր:

— Ֆիմկա, բաց արա:
Ֆիմկան կատաղած ձայնով պատասխանեց՝
— Ձեզ ի՛նչ է պեաք: Իսկույն:
Մենք լսեցինք, թե վոնց Ֆիմկան մլուլ էր գալիս սենյակում, և ինչ վոր բաներ աղմկեցին ու զրնգացին: Հետո ճամբարկղը շրխկաց, և Ֆիմկան բացեց դուռը:
— Դու ի՛նչ եյիր անում ետեղ:
— Ենպես... վոչինչ..., — պատասխանեց Ֆիմկան և դուրս չեկավ:

Մենք պատվեցինք սենյակում, փորձեցինք բացել Ֆիմկայի ճամբարկղը, բայց Ֆիմկան բանալիով փակել էր այն:
— Կասկածելի յե, — ասաց Կեշկան: — Պիտի սկսենք հետևել:

— Կա՛ց, պայման է: Ով, վոր կարճը հանեց, մնում է առանց ընթրիքի:

Վանկան յերկարեց մեզ իր բոռնցքը: Բռան մեջ սխմված էլին յերեք լուցիկի: Բոլորն էլ մի շափի էյին յերևում: Յես շոշափեցի յերեքն էլ և քաշեցի մեջտեղինը: Կեշկան առանց մտածելու վերցրեց առաջինը: Ձախը Վանկային հասավ: Մենք համեմատեցինք մեր լուցիկները — իմը կարճ գուրս չեկավ:

— Յես էլ քեզ հետ կգամ, կարելի՞ յե, — հարցրեց ժենկա Կովալյովան:

- Կարելի յե, — ասաց Կեշկան: — Մենակ են ժամանակ, դու էլ առանց ընթրիքի պիտի մնաս:
- Դե կմնամ, — ասաց ժենկան և հառաչեց:

Մենք մի կերպ համբերեցինք ընթրիքին: Հենց հակառակին յես քաղցած էյի, իսկ ընթրիքին տվին իմ սիրած խորտիկը — վենեգրետը: Յես արդեն վորոշեցի՝ այնուամենայնիվ ուտեմ, բայց Վանկա Որեշկովը բարձր և կարծես թե ինձ չի ասում՝

— Այ քեզ և պայման... վրա չա տվել վինեգրետին:

Յես վեր կացա և դուրս գնացի ճաշարանից: Ինձ Սառան կանգնեցրեց՝

— Դու եղ հըր: —

— Գլուխս ցավում ե... ուտել չեմ ուզում:

Ճաշարանից դուրս գալուն պես յես վազեցի: Հետեվիցս քաչերի ձայն լսեցի. — դա ժենկան եր ինձ հասնում:

— Իսկ մեխ վերցրե՞լ ես:

— վերցրել եմ:

Մենք վազելով վեր բարձրացանք, ներս խուժեցինք մեր սենյակը և վերցրինք Ֆիմկայի ճամբարկղը: Ճամբարկղը թեթեվ եր, յես դրի սեղանի վրա: Բայց կողպեքը չեր բացվում, ինչքան վոր յես խառնում եյի մեխով:

— Կոտրիր, թե չե՛ չենք հասցնի, — շնչաց ժենկան:

— Սո՛ւս կաց, — վրա պրծա յես: —

Սառանց քեզ ել գիտեմ:

Պիտի կողպեքը բանալ և ուրիշ վոչինչ: Յես սկսեցի ողակը պտտել և թափահարել. վերջապես, նա լենթարկվեց:

Յես այդ պոկեցի և բացի ճամբարկղի կափարիչը: ժենկան հրեղով ինձ, վրա ընկավ ճամբարկղին, ետեղից հանեց թղթերի մեջ փաթաթած մի կապոց:

— Ինչ վոր կոր բան ե, — շնչաց նա:

— Յեվ սուր...

— Յեվ ծակծկող...

Մեր առաջ լրագրի մեջ փաթաթած ընկած եյին ինչ վոր թիթեղյա աուփեր, կարաված յերկաթալարի կտորներ, կարտոնից կոճ և հաստ թելերի մի կծիկ:

— Սա ի՞նչ բան ե, — հարցրի յես:

— Սա ի՞նչ բան ե, — կրկնեց ժենկան:

ժենկան զգուրթյամբ վերցրեց կոճը և սկսեց պտտացնել ձեռքերի մեջ: Հանկարծ վայր ընկավ ձեռքից և սկսեց զլորվել հատակով: Դուան մեջ կանգնել եր Ֆիմկան և մեզ եր նայում:

— Մենք... մենք... — թոթովեց ժենկան:

Ֆիմկան հրեց նրան մի կողմ, բարձրացրեց կոճը և իր բոլոր անհասկանելի իրերը խնամքով տեղավորեց ճամբարկղի մեջ:

— Եղ ի՞նչ բաներ են, — շնչակտուր հարցրի յես:

Ֆիմկան գլուխն որորեց և ծածկեց ճամբարկղի կափարիչը:

— Հիմարներ — ասաց նա:

Մենք լուռ եյինք:

— Հիմարներ — կրկնեց Ֆիմկան: — Դուք վոչինչ ել չեք հասկանում:

Նա պտտեց ողակը, քաշեց վոր ստուգի — ամհըր ե արդյոք, և դուրս գնաց սենյակից:

Մենք ճաշում եյինք: Ճաշը մտով լավ կերակուր եր և շատ համեղ: Յես ենպես եյի զբաղվել կերակրով, վոր միանգամից չլսեցի մեջքիս հետևի կամացուկ թրխկոցը:

— Թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ — ինչ վոր մեկը բաղխում եր ճաշարանի պատը:

Յես հետ նայեցի, տեսա՝ պատի արանքից մի աչք ե յերևում և կես քիթ:

Դա հովիվ Գրիշկան եր. — կոխողից: Յես վեր կացա:

— Ի՞նչ ե. ներս արի:

Գրիշկան զլխով նշան արեց:

— Ժամանակ չունեմ: Յես հոտիս հետ, ետեղ ձորի հետեփս եմ: Ճաշից հետո Վանկալի հետ յեկեք: Լավ:

— Լավ

Ճաշից հետո յես, Վանկա Որեշկովը և Կեշկան աննկատելի կերպով տղաներից ճղեցինք և անտառակի միջով վազեցինք դեպի ձորը: Չորի հետևը մարգագետինն եր և ձորի յեզրերը պտտած եյին կանաչով: Մենք զլորվեցինք ներքև, ուղղակի ձորի հատակը. մագլցեցինք վեր և կանգ առանք:



ուղիղ մեզ վրա չեր գալիս ճտպտուն, պողպատը մի կով: Մեզ տեսներով, կովը կանգ առավ և սուր վորոված պողերով գլուխն իջեցրեց: Յես հետ գնացի և Վանկա Որեշկովին առաջ գցի: Բայց Վանկան կռացավ գեպի իրեն վտար և սկսեց կոշիկի թելերը կապոտել:

— Գնացեք, յես ձեզ կհասնեմ:

Յես հրեցի կեշկային. կեշկան հանկարծ բարկացավ՝

— Գու ինչ ես հրում: Գնա՛, յես Վանկային կսպասեմ:

— Են ժամանակ բոլորս ել միասին գնանք, ել յես ինչո՞ւ մենակ գնամ, — ասացի յես:

Վանկան կոշիկի գլխին յերկար մլուլ տվեց: Յես աչքի տակից նայում եյի կովին: Կովը նայեց մեզ, ել ավելի իջեցրեց կեռ պողերով գլուխը և... սկսեց արածել: Նա պոչը թափ տարով՝ մեզնից մի կողմ անցավ:

Ին՛, առա՛ջ վազենք, — ասաց Վանկան, վերջապես կոշիկի թելը կապելով:

Յեվ մենք վազեցինք առաջ:

32

Գրիշկան պառկել եր խոտի վրա, ձեռքերը գլխի տակը դնելով: Նրա շուրջը ման եյին գալիս կովերն ու հորթերը, բայց թե կովերը և թե հորթերը մեզ վրա և վոչ մի ուշադրութուն չդարձրին:

Մենք համարձակ մոտեցանք Գրիշկային:

— Ինչո՞ւ չես կանչել:

— Գործ կա, — ասաց Գրիշկան և նստեց: — Վաղը մեզ մոտ յերեխաների ժողով ե:

— Հետո՞:

— Խու՞մբ պիտի կազմեն:

— Ա՛յ, եզ լավ ե:

Գրիշկան գլուխն որորեց:

Մեր ղեկավար Պրոնկա Ֆոմինն ետը կգա ձեր ղեկավարի մոտ՝ ձեզ կանչելու, — ասաց Գրիշկան: — Նրանք միասին են ես գործը գլուխ բերել:

Յես վոչ մի կերպ չեմ հասկանում, թե ո՞ւր ե թեքում Գրիշկան:

— Դե հետո ինչ, — հարցնում եմ: — Վաղուց եր պետք:

— Բանը զբանում չի, — հոնքերը կիտած ասաց Գրիշկան: Մեր տղերքն եսպես են ասում՝ ել ինչ խումբ ե, յերբ վոչ փողկապներ կան, վոչ թմբուկ, վոչ յերաժշտափող և վոչ ել վորեւե բան:

Մենք վաչինչ շասացինք:

Դե ել ինչ կարող ես ասել:

Յեվ իրոք՝ առանց փողկապների, առանց թմբուկի և յերաժշտափողի լա չի:

Ահա թե ինչ, — շարունակեց Գրիշկան, — մեր տղաներն ասում են՝ յեթե լազերականներն իսկական պիոներներ են և վոչ թե կաթի համար յեկածներ, նրանք մեզ հետ կկիսեն:

— Փաստ ե, կկիսենք, — ասաց Վանկա Որեշկովը: Միայն թե պետք ե ես մասին կոստյայի և Մառայի հետ խոսել: Մենք մենակ չենք կարող:

Յեվ հետո տեսք ելի ինչ, — ասաց Գրիշկան: Մեր տղերքն ասում են՝ յեթե լազերականները մեզ ոգնեն, մենք բոլորս ել կգրվենք պիոներ: Իսկ յեթե չեն ոգնի, նշանակում ե պիոներներն իսկական պիոներներ չեն, են ժամանակ մենք ել չենք ուզում: Ահա թե ինչ են ասում մեր տղերքը:

— Լավ, — ասացինք մենք: — Հավաքույթին կիսուենք: Իսկ վաղը մենք բոլորս ել կգանք ձեր ժողովը:

33

Յերեկոյան լազերի խորհրդի նիստն եր:

Լազերի խորհրդում մասնակցում եյին ղեկավարները և ողակավարները: Բացի զբանից, գալիս են նաև ցանկացող պիոներները: Մենք յերեքս ել յեկանք:

— Դուք ինչ: — Հարցրեց կոստյան:

— Մենք հարց ունենք, — ասաց Վանկա Որեշկովը. — գլուղական պիոներներին ոգնելու մասին:

— Շատ լավ, ասաց կոստյան:

Մենք բոլորը, ինչ վոր կար, պատմեցինք՝ վոնց վոր ասել էր հովիվ Գրիշկան:

Տես ե՛, ինչ տեսակն են.— ասաց յերբորդ ողակի ղեկավար Կորենկովը:— Յերբ մենք գնում էյինք, Գրիշկան շվագնում էր մեզ, իսկ հիմա խնդրում է:

Մենք բոլորս շփոթվեցինք: Ճիշտ է, ախր Գրիշկան յերկու մատը բերնին՝ մեզ շվագնում էր և անվանում պարոնների գավակներ:

— Եղ վոչինչ:— ասաց Սառան:— Տղաները դեռ պիտներներ չեն, նրանք չեն հասկանում: Անցյալ տարի նրանք տեսել են, վոր քաղաքի պիտներները նրանց չեն ուզեցել ոգներ: Մենք պետք է ոգներնք նրանց:

Եստեղ մենք բոլորս ել համաձայնեցինք Սառայի հետ, Կորենկովն ել նույնպես:

— Հիմա յեկեք խորհրդակցենք, քննենք, թե ի՛նչպես ոգներնք,— ասաց Կոստյան:

Մենք բոլորս մտածեցինք և հետո սկսեցինք առաջարկել՝ ով ինչ մտածել է: Յեվ անա թե ի՛նչ վորոշեցինք մենք.

1. Գյուղական խմբին տալ մի թմբուկ — մեզ մոտ յերեքն է:
2. Կուլտաշխատանքներին բաց թողած դրամներով քաղաքում փողկապներ պատվիրել:
3. Հանձնարարել ավագ պիտներներին՝ տղաների հետ գրույցներ անցկացնել, պիտներների որենքների և սովորությունների մասին:
4. Ամբողջ ամիսն ոգնել գյուղական խմբի աշխատանքներին:
5. Քաղաքից դուրս գրել գյուղատնտեսության և գյուղում պիտներական աշխատանքներին վերաբերյալ գրքուկներ:
6. Լագերի վերջում կաղմակերպել գյուղի տղաների հետ ինքնագործունեյության մեծ յերեկո և հրավիրել կոլխոզնիկներին:

Կոլխոզ՝ յերեխաների հավաքին մենք պատրաստվեցինք հանդիսավոր գնալու: Դրոշակը հանեցինք, շարք կանգնեցինք,

Թմբկահարներն սկսեցին թմբկահարել, վանկա Որեշկովն ել տվեց ճանապարհվելու ազդանշանը: Մենք հետներս տանում էյինք նվերներ — թմբուկ, պիտներական գրքուկներ, մի քանի ժուրնալներ և փողկապ՝ ղեկավարի համար:

Ջգա՛ստ: Մե՛կ յերկո՛ւ հաշվել, — հրահանգեց Կոստյան:

Յեվ հանկարծ ամենավերջին վայրկյանին պարզվեց, վոր Կեշկա Մալազինը և Ֆիմկա Վերստան չկան: Սկսեցին տղաներից հարցնել — վոչ վոք նրանց չի՞ տեսել:

— Նրանք վերջին ժամանակները միշտ միասին են ման գալիս, — ասում է Ժենկա Կովալցովան:

Գնացինք առանց նրանց: Կոստյան բարկացավ:

— Ամենից շատ Մալազինն եր խոսում, իսկ ինքը փախել է:

Յերբ մենք յեկանք, ժողովն արդեն սկսվել էր: Տղաներից մի յերեսուն հոգի նստել էյին խրճիթ-ընթերցարանում՝ նստարանի վրա: Կոմյերիտական Պրոնկա Ֆոմինը՝ գյուղական ղեկավարը՝ զեկուցում էր պիտներների մասին: Մենք կամացուկ տեղավորվեցինք նստարանների վրա:

Յերբ Պրոնկա Ֆոմինը վերջացրեց զեկուցումը, դուրս յեկավ Կոստյան: Կոստյան պատմեց թե ի՛նչպես են աշխատում պիտներները քաղաքում և ի՛նչպես պիտի աշխատեն գյուղական պիտներները:

— Վրա՛ տուր, գրի՛, — կանչեցին տղաները:

Պրոնկան նստեց սեղանի մոտ, և եստեղ ել տղաներն սկսեցին մոտենալ և գրվել:

Սոսեցան սեղանին յերկուսը — աղջիկ և տղա, յերկուսն ել փոքր էյին, սեղանից վոչ բարձր, իսկ նրանց շապիկները կարծես թե ուրիշից փոխ առած լինեյին, տալրակի պես:

— Դու մեզ գրի, մենակ թե սուսիկ-փուսիկ, — ասաց տղան:



— Վհնց թե սուսիկ-փուսիկ:

— Ախր մեզ մայրիկը չի թուշլաարել...

Նրանց գրեցին, իսկ Կոստյան ու Պրոնկան խոստացան զնալ նրանց ծնողների հետ խոսելու:

Մտտեցավ մի փոքրիկ աղջիկ ել—Նա-
դյան:

— Իսկ կարելի՞ չե մինչև աշուն գրվել

— հարցրեց Նադյան:

— Ինչո՞ւ մինչև աշուն:

— Ախր յես վալիսկաներ չունեմ, ինչով զնամ... գլուխն իջեցներով ասաց Նադյան:— Մայրիկս ինձ եղպես ել հրամայել ա—գրվիր մինչև աշուն, իսկ ձմեռը, իմացիր, չեմ թողնի...

Կոստյան պրոնկայի հետ գրեցին դրա մասին գրքույկում և խոստացան ելի մի բան անել:

Գրվեցին ընդամենը քսանվեց հոգի:

— Իսկ հիմա,—ասաց Պրոնկան,— նորից տեղներդ նստեք: Պիոներ-լագերականների կողմից խոսք ունի ընկեր Որեշկովը:

— Տղերք, նոր պիոներներ,—բարձր ձայնով խոսեց Վանկա Որեշկովը:

Վանկա Որեշկովը լավ է խոսում—չի շտապում, չի քաշվում, մինչև անգամ ձեռքով ել թափահարում է, մեծերի պես:

— Մենք՝ քաղաքի պիոներներս՝ վողջուսում ենք ձեր խումբը և մատուցում ենք ձեզ նվերներ...

Նստեղ յես նախեցի հովիվ Գրիշկայի վրա: Նա տեղից բարձրացավ, վիզը յերկարացրեց և խորամանկ ժպտում է:

— Նախ՝ պիոներական թմբուկի թմբկահարեք ենպես, վոր բուրժուազիան և կուլակները սարսափ զգան նրա գլըր-գյունից:

Դու մի տես՝ ի՞նչ սրամիտ բան ասաց: Բոլորը ծիծաղեցին և սկսեցին ծափահարել:

— Յերկրորդ՝ պիոներական գրկույկներ և ժուրնալներ: Կարգացեք ենպես...

Նստեղ Վանկան խոսքը կորցրեց, յերևում է մոռացել երթե ի՞նչպես ասի:

— Ուրեմն, վորպեզիս լավ պիոներներ դառնաք և ամեն ինչ ել հասկանաք:

Տղաները նորից ծափահարեցին:

— Յերրորդ՝ փողկապ ձեր դեկավարի համար: Իսկ ձեզ մենք փողկապներ կնվիրենք, հենց վոր պատրաստվեք հանգիսավոր խոստման...

— Դե մենք շուտ կանենք—տեղից կանչեց Պավլունկան:

— Կպատրաստվենք—կանչեցին մյուսները:

— Յեվ հետո,—ասաց Վանկա Որեշկովը,—քանի վոր մենք աշխատում ենք ձեզ հետ միասին, կողներք ձեզ և մեր գնալուց հետո. առաջարկում եմ խումբն անվանել «քաղաքի և գյուղի պիոներների մերձեցման անվան»:

Նստեղ բոլորը կանչեցին, ծափահարեցին, տեղներիցը վեր-վեր թռան, իսկ Վանկան, կարծես թե վողչինչ չի պատահել, վերադարձավ մեզ մոտ և նստեց Պավլունկայի կողքին:

Հետո Կոստյան սկսեց տղաներին սովորեցնել պիոներական լերգեր:

— Դե, ասում է,—սկզբի համար յեկեք սովորենք «Вейтесъ кострами»:

— Սովորել ենք արդեն—կանչեց հովիվ Գրիշկան:

— Գիտենք,—կանչեցին բոլոր տղաները:

— Դե, վոր գիտեք, յեկեք սովորենք մեր պիոներական «Կարտոշկան»:

— Գիտենք. —կանչեցին նորից տղաները:

— Սոսքերն ել գիտեք,—հարցնում է Կոստյան: Գիտեք,—կանչում են տղաները:— Դեռ անցյալ ամառն ենք սովորել:



— Ուրեմն,— ասում է Կոստյան,— են ժամանակ յեկեք մեր պիտներական լողունգները սովորենք:

— Գիտենք,— կանչում են տղաները:

Կոստյան շրթունքները կծեց— բարկանում է:

— Դե, յեթե գիտեք, յեկեք բոլորս միասին կրկնենք մեր հիմնական լողունգը: Դե, սկսենք: Մեկ, յերկու, յերեք:

Բոլորը լուռ են, մենք էլ ենք լուռ, չնայած վոր գիտենք:

— Ինչո՞ւ յեք լուռ,— ծիծաղում է Կոստյան:

Դե մենք մոռացել ենք,— ասում են տղաները:— Անցած ամառն ենք սովորել, իսկ հիմա մոռացել ենք:

— Գուցե յերգերն էլ եք մոռացել:

— Յերգերն էլ ենք մոռացել...

— Ուրեմն պէտք է սովորենք:

— Պետք է:

Կոստյան խոսքերն ասաց, մենք յերգեցինք, մեր հետեւիցն էլ բոլոր տղաները:

Մեր—փորերը լսե-ե-ե-ղճ

Քաղցած եին՝ մի-ի-ի-շտ...

Յե՛վ հանկարծ խրճիթում ինչ վոր ձայն է գոռում, և ենպես ուժեղ, վոր յերգն էլ խանդարեց,

— Լսեցեք, լսեցեք, լսեցեք, խոսում է Լենինգրադը:

Ձայնն ուժեղ է, ամեն մի խոսք առանձին լսվում է, և

վոչ մի կերպ չես հասկանում, վորտեղից են գոռում:

Իսկ ձայնը նորից կանչում է՝

— Լսեցեք, լսեցեք, ձեզ հետ խոսում են Լենինգրադի պիտներները:

Մենք լսեցինք, նայում ենք միմյանց— վորտեղից է ձայնը:

Իսկ ձայնը նորից կանչում է՝

— Ուշադրութ՛յուն: Անկյունում, սեղանի վրա դրված է մի արկղ: Արկղում ռազիո-ընգունիչն է: Ռազիո-ընգունիչ: Դա Լենինգրադի պիտներների նվերն է: Լենին-գրա-դի պիտներ-նե-րի:

Նստեղ բոլորը տեղներից վեր թռան, վազեցին դեպի

անկյունը, քիչ եր մնում շուռ տալին սեղանն ու արկղը: Լավ եր. Կոստյան վրա հասավ բռնեց սեղանը և կանչեց՝

— Ձգա՛ստ: Հերթով կլսեք:— Իսկ ինքը կամացուկ հարցնում է մեզ՝

— Տղերք, ես ո՞վ ե հնարել:

Իսկ մենք վոչինչ չգիտենք:

— Տղերք,— հանկարծ կանչում է ժենկա Կովալովյան, — Կեչկան Ֆիմկայի հետ նստած են կաուրի վրա:

Մենք տեղներիցս պոկվեցինք, դուրս թռանք խրճիթից, գլուխներս վեր բարձրացրինք և տեսնում ենք՝ ծառի վրա նստած է Ֆիմկա Վերստան և անտենան է դրստում, իսկ Կեչկան էլ կողքին, կաուրի վրա յե: Կեչկայի ձեռքին թղթից խողովակ է և ամբողջ ուելն էլ մրտած:

— Դու եղ ի՞նչ ե, խողովակ մաքրո՞ղ ես դառել,— հարցնում եմ յես:

— Եղ յես եյի ձեր լսափողին ռազիո հաղորդում գոչողը,— պատասխանում է Կեչկան:— Մենակ թե ենտեղ սոսկալի փոշի յե:



— Մի՛շկա, ա՛յ Մի՛շկա,— շշնջում է ինձ ժենկա Կովալովյան և թևիցս քաշում:— Ախր եղ... են ժամանակ... կոճը... ախր եղ Ֆիմկան է ռազիոն շինել...

Հիշեցի յես, վոնց մենք Ֆիմկայի ձամբարկղը կտորում եյինք, և վոչինչ էլ չհասկացանք նրա թիթեղի տուփերից և կոճերից:



Մենակ թե կեշկան եղ յե՞րբմանից ե կպել նրան:

— Դուք եղ ի՞նչ ե, տղերք, ինքնե՞րդ եք սարքել,— հարցնում ե Կոստյան և մազերը խառնում — նշանակում ե գո՞հ ե:

— Մենք կեշկայի հետ, յերկուսով,— պատասխանում ե վերեկից Ֆիմկան:— Դրա համար ել մենք ձեզ հետ միասին չեկանք... առաջ վազեցինք...

Ա մտույտ տասն ուրախալի որ ե: Տասին գալիս ե ծնողները եքսկուրսիան:

Յերկու որ առաջ սկսեցին խոսակցութունները՝ ով կգա, ում ծնողները չեն կարող գալ, ով ե յուրայիններին սպասում, ով՞ չե:

— Ինձ մոտ հայրիկս ել, մայրիկս ել և յեղբայրս ել կգան,— պարծենում եր վանկա Ուրեշկովը:— Յեղբայրս ինժիներու թյուն ե սովորում:

— Իսկ իմ մայրն ու քույրը կգան,— ասում եր Փենկա Կովալյովան:— Քույրս նախկին պիոներկա յե, իսկ հիմա կոմսոմոլում — ակտիվիստկա:

Իսկ յես չգիտեմ, մայրս կգա թե չե: Ճիշտ ե, յես առանց նրան լագերում չեմ տխրել: Բայց վոր բոլորն ել սկսեցին խոսել ծնողների մասին, ուղղակի սկսեցի կարոտը քաշել: Յերանի շուտ գար ամսի սոսիս:

Յեկավ և տասը: Առավոտվանից բոլորն ել լավ հագնվեցին, բոլորն ել փողկապներով են և գլուխները սանրած:

Նախաճաշից հետո՝ խաղալ վոչ վոք չսկսեց:

Դուրս յեկանք ճանապարհ, նստեցինք խոտի վրա և նայում ենք դիմացներս — վոչ վոք չի՞ գալիս արդյո՞ք:

Մի ժամից կեշկան կանչեց՝

— Գալիս են:

Յեվ բոլորս ել տեսանք՝ ճանապարհի վրա փոշի, իսկ փոշու միջից իրար հետևից գալիս են կառքերը: Մենք տեղներիցս վեր թռանք և ուղիղ դիմացները — ով շուտ կարող ե: Իսկ ամեն մի կառքում ծնողներն են նստած, նրանք մեզ

ձեռքով նշան են անում — ամեն մեկը յուրայինին ե կանչում: Փենկայի մոտ յեկան, Ֆիմկայի մոտ յեկան. դե հետո՞ շատ շատերի մոտ ել: Իսկ յես կառքից կառք ելի թռչում — մայրիկս չկար:

— Ենտեղ կայարանում, ծնողներից շատերը կան, նրանք վոտքով են գալիս, — ասաց ինձ Փենկայի քույրը:

Մեզնից տասը հոգի — մնացին, վորոնց մոտ վոչ վոք չեք յեկել: Նստեցինք մենք ճանապարհի մոտ և սկսեցինք սպասել:

— Գալիս են, — նորից կանչեց կեշկան: Նա շատ սուր աչքեր ունի, նա յերեք վերստի վրայից տեսնում ե:

Մենք նորից վազեցինք: Առաջից գալիս են մի տղամարդ և յերկու կին:

— Հայրիկ, — կանչեց կեշկան: —

Մայրիկ:

— Մայրիկ, — կանչեց կողքիս կանգնած Կորենկովը և թռավ հասակավոր մի կնոջ գիրկ, վորը կեշկայի ծնողները հետ եր գալիս:

Մնացինք ութ հոգի: Վազեցինք առաջ, դիմացներիցս ելի յես գալիս: Միայն յես իսկույն տեսա, վոր նրանց մեջ մայրիկս չկար: Մայրս բարձրահասակ կին եր, նրան հեռվից կարելի յեր նկատել:

— Հայրիկ, մայրիկ, — կանչեցին շուրջս:

Իսկ յես հարցնում եմ,

— Ենտեղ յեկողներ կան:

— Չե, — պատասխանում են ծնողները — մենք վերջինս ենք:

Յեվ մենք մնացինք շորս հոգի: Մենք կանգնեցինք, նայեցինք դիմացներս՝ ել վոչվոք չկա: Յեվ կամաց-կամաց դարձանք լագեր:



Հագերն այսոր, լագերի նման չի: Նստարանների, խոտերի վրա, թփերի տակ, պատշգամբներում, ամեն տեղ նստատեղ են տղաները ծնողների հետ, ընկույզ են ջարդում, քաղցրավենիներ են ուտում: Ամեն մեկն իր խոսակցությունն ունի:

Յես մոտեցա Վանկա Որեշկովին, դե հիմա նրա ցավը յես չեմ: Նա նստած է խոտի վրա հոր կողքին, իսկ յեղբայրը նրան ինչ վոր բան է պատմում, և բոլորն ել ծիծաղում են: Իսկ նրանց մոտ մի ամբողջ տոպրակ կանֆետ է դրած:

Ոցկվեցի յես կեշկայի մոտ—նա ել գլուխ չունի հետո: Նա մոր հետ նստած խոտում է և խնձոր է ուտում:

Տեսա յես ժենկա կովալյովային: Ժենկան միշտ ել ինքը առաջինն եր մեզ մոտ խցկվում: Իսկ հիմա ինձ վոչ մի բանով ել չհյուրասիրեց, իսկ նրան համ կանֆետ, համ ել պեչենի եչին բերել:

— Դո՛ւ ինչ ես ուզում,— հարցրեց նա, նաչելով ինձ վրա:

— Վո՛չ մի բան,— ասացի յես չարացած և գնացի: Յեմ եղպիտով յես վոչ մի տեղ չմնացի: Վոչ վոր ել ինձ հետ գլուխ չուներ: Դեկավարներն ել չկային: Յեմ են յերեքն ել, վորոնց ծնողները չեյին յեկել, կորել եյին ինչ վոր տեղ:

Դնացի յես սենյակս, պառկեցի մահճակալին և գլուխս թաղեցի բարձիս մեջ:

Յես չլսեցի թե Ֆիմկան վո՛նց մտավ սենյակս:

— Դու, ինչ է, լաց ես լինում.— հարցրեց Ֆիմկան և կամացուկ ուսիցս քաշեց:— Դու եղ ինչ է:

Յես չպատասխանեցի և դեմքս թազցրի:

— Քեզ մոտ չեն յեկել, հա՛:

— Յես վոչ վորի ել չեմ ուզում,— ասացի յես: Թո՛ղ, խնդրում եմ:

Ֆիմկան գնաց: Իսկ յես մինչև ճաշ թավալեցի և ճաշից հետո նորից պառկեցի: Քնելը չեյի քնել, այլ շուռումուռ եյի գալիս: Մյուս տղաները չպառկեցին քնելու. ծնողների գալու պատճառով մինչև անգամ մեռյալ ժամը վերացրին:

Թեյից առաջ ծնողները մեկնեցին: Թեյի ժամանակ տղաներից վոչ վոր հացին ձեռք չտվեց՝ բոլորն ել տնից բերածով եյին հյուրասիրված—մեկը կանֆետ ուներ, մյուսը, պեչենի, յերրորդը՝ խնձոր: Յես նստեցի իմ տեղը և աշխատում եմ վոչ մի բանի չնայել. են մյուս յերեքն ել վորոնց ծնողները չեն յեկել, նույալես տխուր նստած են:

Հանկարծ Ֆիմկա Վերատան կանգնեց, գդալով թխթխկացրեց սեղանին և ասաց՝

— Տղե՛րք, յես առաջարկում եմ բոլոր քաղցրավենիները հավաքել մի տեղ և բաժանել բոլորի մեջ, վոր վոչ վոր ել չնեղանա: Համաձայն եք:

— Համաձայն ենք:

— Ճիշտ է:

Յես ել կանչեցի՝ «ճիշտ է», վորովհետև իսկապես վոր այդ ճիշտ է: Ընտրեցինք Ֆիմկային և աղջիկներից յերկուսին, վորպեսզի քաղցրավենիները հավաքեն և բաժանեն: Իսկ մնացածները նստել և սպասում եյին: Ինձ բաժին ընկավ յերեք սառնաշաքար, կյոր պեչենիներ, մի կտոր պաստիլա և յերկու՝ «Միշկան հյուսիսում» կանֆետ:

— Եստեղ կա ե՛լի չորս խնձոր, — ասաց Ֆիմկան:— Մենք առաջարկում ենք տալ են չորս պիոններներին, վորոնք եսոր հյուրերը չունեյին: Ճիշտ է:

— Ճիշտ է:

Յեմ յես խնձոր ել ստացա:



Այսոր մենք ծրագրված սովորական ժամանակից յերկու ժամ առաջ նախաձաշեցինք և գնացինք արտը:

Միայն փոքրերը մնացին տանը: Այսոր մեր կիրակնորյակն է գյուղական պիոններների հետ,— մենք գնում ենք հունձ անելու:

— Հիշեք բոլորդ ել, ասաց կոստյան,— շուրուխներ չա-

ներ, ցորենը չտրորել, գլխկոնձի չտալ: Կոլխոզնիկներն սկըզ բուժ բորբովին ել չեյին ուզում թողնել պիտներներին: Նրանք վախենում ելին, վոր մենք կսկսենք չարություն անել: Յես նրանց խոստացա, վոր եղպիսի բաներ չեն լինի: Հի՛ շեք այդ: Յե՛վ հետո նորից Կոստյան ասաց՝

— Սմբողջ պատասխանատվությունը մենք դնում ենք կարգապահության հանձնաժողովի վրա:

Վանկա Որեշկովը կանչեց ինձ, Կեշկային և Ժենկա Կովալովին:

— Դե՛, տղերք, աչքներս չորս արած պիտի նայենք) — ասաց նա: — Իսկ դո՛ւ, Կե՛շկա, կարծեմ դու սիրահար ես գլըխկոնձի տալու:

Կեշկան կատաղած պատասխանեց՝

— Յեթե դու շուրուխ չանես, վո՛չ մի շուրուխ ել չի լինի:

Դե ինչ վոր ճիշտն է, ճիշտ է: Վանկան առաջին շուրուխին է, իսկ միշտ ել վրան չի առնում, կարծես թե իրեն չի վերաբերում:

Հնձելու դուրս եր լեկել ամբողջ կոլխոզավոր յերիտասարդությունը: Աղջկերքը՝ կարմիր թաշկինակներով, ծաղկավուն յուրկաներով, տղերքն ել ծաղկավուն բլուզներով: Մեր աղջկերքն ուղղակի կապիկներ են. հենց վոր գլուղական աղջիկներին տեսան, իսկույն ևեթ թաշկինակների տեղ փողկապները կապեցին գլխները:



Մեզ խմբերի բաժանեցին: Մի խումբ զբաղվեց հնձվորների մեջ բարձրաձայն ընթերցանություն կազմակերպելու գործով. աղջկերանց մի մասն ուղարկվեց գյուղ — խրճիթընթերցարան՝ ենտեղ ամբողջ գյուղի բոլոր փոքր յերեխաներին բերել են, վորպեսզի տանը նրանց հետ վոչինչ չպատահի: Աղջկերքը նրանց հետ կխաղան և ընդհանրապես կխնամեն: Յես ու Կեշկան մնացինք խոտ հավաքելու:

Պոտ հավաքելը բորբովին ել զժվար չի, մի յերկու բուպեյում բոյիցդ ավելի մեծ խուրձ կկապես:

Մեզ հետ յեկավ Վերա Սմիրնովան՝ մեր սանիտարկան: Նա չեր աշխատում, բաց արեց իր դեղատունը և դնաց դաշտը: Գնում է դաշտերով և կանչում՝

— Ու՛մն է պետք բժիշկ. ու՛մն է պետք բժիշկ:

Մենք սկզբում ծիծաղեցինք: Բժշկի՛ն մտիկ արեք հլա-Իսկ բժիշկը պետք յեկավ: Մի կնիկ վոտը կարել, կանգնել է և փարստով արյունն է սրբում: Վերան վազեվազ դեպի նա: Իսկ կինը հրաժարվում է, — «Դե պետք չի, ի՛նչ կա ենտեղ, յես ինքս հող կդնեմ և կանցնի»: Վերան հազիվ նրան համոզեց, նրա վոտը լվաց, յոդ քսեց և կապեց: Իսկ ետտեղ, տղաներից մեկը ինքը՛ յեկավ ճանկովածքով: Վերան նրան չկապեց, այլ ուղղակի յոդ այրեց:

Հետո բորբին ել դուր յեկավ: Ով չեր ծուլանում, վազում էր — վորինը ճանկովածք եր, վորին ճանճն եր կծել: Յե՛վ բորբն ել խնդրում եյին՝

— Քուլըրիկ, յոդ քսիր:

Մանավանդ մի փոքրիկ տղա — սովորություն եր դարձել: Առաջին անգամ ձեռը ճանկուելուց հետո, յերկու անգամ ենպես ուղղակի վազել է

— Քսիր, խնդրում եմ, մատիս:

— Դե ախր դու վոչինչ չունես:

— Դե քսիր, մի՛թե դու ափսոսում ես:

Ի՛նչ արած: Մտիպված եր քսել. — յոդից վնաս չի լինի:



Ամբողջ որը դաշտում աշխատողների մեջ կուլտ-մասնա-
յական աշխատանք տարանք: Եստեղ ել ճաշեցինք.— ճաշը
բերեցին կոլխոզից ճանբորդական խոհանոցով: Յերեկոյան
դեմ պիտոներների մեծ մասը գնաց լագեր: Միայն հինգ հոգի—
Ֆիմկա Վերատան, Վանկան, Կեշկան, յես և Կորենկովը թույլ-
տվություն վերցրինք Կոստյայից՝ գիշերելու գյուղում, տղա-
ների հետ: Իսկ առավոտյան մենք կոլխոզնիկների հետ կգնանք
դաշտ՝ աշխատանքները վերջացնելու:

Յեկանք գյուղ: Պավլունկան տարավ մեզ կոլխոզի ճաշա-
րանը: Ճաշարանը սարքված է խրճիթում. յերկու շարք կանգ-
նած են սեղաններն ու նստարանները: Ճաշարանում նեղ-
վածք է, բայց քաշովին մեզ տվին խոր ամաններում և ամեն
մի ամանի մեջ էլ դրին մի մեծ կտոր չուղ:

Մենք կուշտ կերանք:

— Իսկ հիմա, — ասաց Պավլունկան, — զնանք խոտանոցը
քնելու:

— Իսկ դ՞ու վորտեղ կքնես, — հարցրինք մենք Պավլուն-
կային:

— Յես ել ձեզ հետ:

Սոտանոցը մեծ է, անկյունում խոտն է թափված, նրա
վրա քնելը շատ փափուկ է: Մենակ թե մութն է:

Մեզ ճրագ չտվին:

— Ով է իմանում՝ շուռ կտաք և հրդեհ կառաջացնեք —
ասաց մեզ պահապան կինը:

— Իսկ եստեղ մկներ չկան. — հարցրեց Կեշկան:

— Դե վո՞նց չլինեն, մկներ կան. — ասաց պահապան կինը:

— Իսկ ո՞ձեր, — հարցրեց Կեշկան:

— Ոձեր չկան, մեզ մոտ ոձեր չեն լինում:

Մենք պառկեցինք խոտի վրա: Որվա աշխատանքներից
հոգնել ենք, բայց քներս չի տանում: Վախենում ենք: Ու-
ղում եյի ասել, վոր վախենում եմ, մեկ էլ ամոթ է Պավ-
լունկայի առաջ: Նա յերևի սովորած կլինի. կսկսի ծիծաղել:

— Քնա՞ծ եք, տղե՛րք — մթության մեջ հարցնում է Վան-
կան:

Բոլորս միասին պատասխանեցինք:

— Չե, քնած չենք:

— Բա ինչ՞ու չեք քնում:

— Քներս չի տանում ինչ վոր...

Հանկարծ անկյունում ինչ վոր բան խշխշաց, մլուլ տվեց
և ծղրտաց:

— Ա՛յ — կանչեցի յես:

— Ա՛յ, ա՛յ. — ձեն տվին մյուսները:

Բոլորս վեր թռանք:

— Վոչինչ, եղ մկներն են. — ասաց Վանկա Որեշկովը:

Իսկ իրեն ատամները չխշխուում են:

— Իսկ դուք վախենում եք — հարցրեց Պավլունկան:

— Չե՛... — յերկարացրինք մենք: — Ինչ՞ու պիտի վախե-
նանք...

Պառկեցինք, լռել ենք:

— Իսկ յես եսպես վախենում եմ. — ասում է Պավլուն-
կան: — Յես մթության մեջ վախենում եմ:

— Յես ել եմ վախենում, — ասում է Կեշկան: — Մկներից
ել եմ վախենում:

Յես ել եմ վախենում. —

— Յես ել...

— Յես ել...

Բանից դուրս յեկավ՝ բոլորն էլ վախենում են:

— Տղե՛րք, ա՛յ տղե՛րք, — ասաց Պավլունկան: — Յեկեք վա-
խենալու բաներ պատմենք:

— Իսկ ինչ վախենալու:

— Ինչ վոր հասնի... ում հետ ինչ վոր պատահել ա:

Մենք բոլորս էլ սողալով մոտեցանք իրար, պառկեցինք
կողք-կողքի: Իսկ մկներն էլ անկյունում մլուլ են տալիս ու
ծղրտում:

— Դե քեզ հետ ի՞նչ դեպք ա պատահել:

Պավլունկան լռեց:

— Ինձ հետ շատ սարսափելի բան է պատահել: Յես հորս հետ միասին գնացել էյի անտառ փայտի... Եղ մինչև կոլխոզ մտնելն եր, նախանցյալ տարի:

— Հետո՞, — հարցնում է կեշկան, և ձայնից ստացվում է, վոր վախենում է:



— Յեկանք մենք անտառ և սկսեցինք ծառերը կտրտել: Հայրս կտրտում է, իսկ յես ել ճղներն եմ հավաքում... Որն սկսեց մթնել, բայց հայրս հլա շարունակում է կտրտել, չի շտապում: Յեվ հանկարծ լսում ենք՝ «ա-ա-ա»՝ Յերկարածիզ, խղճալի...

Պավլունկան լռեց: Կաշվիս վրայից կարծես թե մըջյուններ սկսեցին վազվզել:

— Իսկ հետո ելի՞ «ա-ա-ա» և նորից «ա-ա-ա»:

— Դա ի՞նչ եր բա, — չհամբերեց Վանկան: Հարցնում է, իսկ ձայնը կարծես թե ուրիշինը լինի, վախից խուզոտում է:

— Գլուզացի յեր, — ասաց Պավլունկան: — Գլուզացուն նո՞ճին սխմել եր, նա ել եղպես ձեն եր հանում...

— Իսկ ահա, ինձ հետ սարսափելի բան է պատահել, — ասաց Մաշկա Կորենկովը: — Յես հրդեհի մեջ եմ ընկել: Յես դեռ փոքր էյի, ապրում էյինք մենք քաղաքում՝ Մեծ Ռիտայում: Տունը հին եր, փայտից. ներքևում կինը ճրագը ձեռքիցը վայր գցեց, նավթը թափվեց, և միանգամից ամբողջ տունը կպավ:



— Բա եղ վո՞նց կլինի հանկարծ. — անվստահաբար ասաց Ֆիմկան:

— Դե ենպես, միանգամից, տունը հին եր, չոր: Մենք յերկրորդ հարկումն էյինք ապրում: Քնել էյինք, ի հարկե, վորովհետև այդ բոլորը կատարվեց զիշերը:

— Յեվ վառվեցի՞ք — հարցրի յես:

— Տեսնում ես՝ յես կենդանի յեմ, նշանակում է՝ չենք վառվել, — ասաց Կորենկովը: — Մենակ թե, վոր զարթնեցինք, տեսանք ամբողջ սենյակը լցված է ծխով, ամեն ինչ ձայթում եր, և զանգի ձայն, կարծես գանդերն էյին տալիս:

— Իսկ հրդեհաշեջներին կանչեցի՞ք, — հարցրեց կեշկան:

— Դու մի՛ խանգարի, ինքս ամեն ինչ կպատմեմ: Մայրիկս ճչաց, ինձ ել մահճակալից վերցրեց: Յեվ խելքը չկտրեց անմիջապես դուրս փախչել, կպավ իրերից: Կամոզից ամբողջ արկղները հանեց, ձեռքն է վերցնում ամեն մի չուլ ու փալաս, բոլորն ել ձեռքից վայր է ընկում: Ամբողջ ձայնով ել գոռում է: Մենք եղպես ել կլառվեյինք:

— Հետո՞:

— Դե, դու ել մի՛ վազի. բոլորը կպատմեմ: Ծուխը շատացավ, տաքությունն ել մի կողմից: Մայրիկս վազեց դեպի դուռը, սանդուխքներն արդեն կրակի մեջ էյին: Նա սխմեց ինձ իրեն. դես ու դեն ընկավ և սկսեց գոռալ՝ «Ոգնեցե՛ք, Ոգնեցե՛ք» Իսկ ո՞վ պիտի ոգներ, — բոլորն ել արդեն վաղուց վազել էյին փողոց:

— Հետո՞:

— Դե, դու ել մի՛ ընդհատիր ինձ, խնդրում եմ. մի գլուխ չչկլացնում ես: Մայրս գոռում է, իսկ կրակն արդեն դռան մոտ է: Յես սկսեցի խեղդվել: Յեվ հանկարծ — զրը՛նգ՝ ապակիները թռան գրողի ծոցը և լուսամուտից հրդեհաշեջը ներս մտավ:

Մեկը հառաչեց: Թե ո՞վ եր, չգիտեմ, մթության մեջ չջուկեցի:

— Բա վո՞նց նա ձեզ դուրս բերեց. — հարցրեց Պավլունկան:

— Ենպես, ելի՛, դուրս տարավ: Սանդուխքներով: Ինձ վերցրեց ձեռքերի վրա, իսկ մայրիկս ինքն իջավ: Հետո նրան ջուր խմացրին, վախեցել էր:

— Դե, հետո ել վոչինչ:

— Վոչինչ: Մինչև առավոտ փողոցումն եյինք կանգներ: Սաղ տունը վառվեց: Իրերն ել հետը: Հրդեհաշեջը լավ վրա հասավ:

— Իսկ յեթե վրա չհասներ,—հարցրի յես:

— Իսկ յեթե վրա չհասներ, հիմի յես քեզ հետ չեյի խոսի,—դժգոհ պատասխանեց Կորենկովը:

— Իսկ յես ել անցյալ ամառ գետումն եյի խեղդվում.—ասաց Կեշկան:

— Հետո՞.

— Հետո ա՛յ թե վոնց. նշանակում է՝ գնացի լողանալու: Տղաների հետ: Սկսեցի լողանալ և խեղդվեցի:

— Բա վո՞նց խեղդվեցիր, վոր կենդանի յես:

— Ենպես վոր սկսեցին թափահարելով ուշքի բերել: Դե դու ել՝ մի խանդարի: Ուրեմն, նշանակում է՝ յես սկսեցի խեղդվել:

— Իսկ ինչո՞ւ:

— Վորովհետև լավ լողալ չգիտեյի,—ափից լողացի առաջ և վախեցա: Դե դու ել մի՛ խանդարի: Ահա, նշանակում է՝ յես սկսեցի խեղդվել: Խեղդվում եմ և կանչում՝ «ոգնեցե՛ք»

— Սաշկալի մայրիկն ել եր կանչում «ոգնեցե՛ք»—նկատեց Վանկան:

— Դե ի՞նչ կա վոր: Դու ել կկանչեյիր: Դե, ահա, նշանակում է, կանչում եմ, իսկ ինքս ել արդեն ջրի տակն եմ գնում: Ենչեւ չեմ կարողանում, ջուրը բերանս է լցվում:

— Անհամ եր յերևի.—ասում է Վանկան:

— Անհամ եր: Դե, ահա, նշանակում է խեղդվում եմ. իսկ ափը լիքը մարդիք են լցվել...

— Բա ինչո՞ւ նրանք չեյին ազատում:

— Վո՞նց թե չեյին ազատում: Բա ո՞վ ազատեց:

— Յես չգիտեմ թե ո՞վ,—ասում է Վանկան.—Դու եյիր խեղդվում, և վոչ թե յես:

— Դե, ահա ուրեմն, նշանակում է, յերկու գյուղացիներ ջուրը թռան և ինձ ազատեցին—դուրս քաշեցին. իսկ յես արդեն ուշաթափ եյի ու կապտած: Հագիվ ջուրը դուրս քաշեցին:

— Եստ հետաքրքիր է.—ասում է Վանկան:

Կեշկան լռեց, լռեց ու հարցրեց կամացով՝ փաղաքշական ձայնով՝

— Իսկ դու, Վանյա, կպատմես վորևէ բան: Գոնը յերևի շատ հետաքրքիրը կլինի:

— Դե, իհարկե, կպատմեմ,—ասում է Վանկան.—Մենակ թե քնելու ժամանակը չի՞:

— Չե՛, դու պատմի՛, հետո կքնենք:

— Առաջ պատմի՛:

— Մենակ ավելի զարգանդեցնող բաներ:

Վանկան մյուլ յեկավ խոտերի վրա և ճռռաց:

— Ինչ վոր ցուրտ է,—ասում է նա, յեղանակը յերևի փչանում է, վաղն անձրև չգա՞:

Պավլունկան դուրս յեկավ, նայեց յերկնքին ու նորից պառկեց կողքներս.

— Չե, չի՛ գա. դու քո պատմութլունն արա:

Վանյան նորից մյուլ տվեց, շուռ-մուռ յեկավ և դարձավ ինձ՝

— Իսկ դո՞ւ ինչու չես պատմում:

— Իսկ ինձ հետ աջնպիսի բաներ չեն պատահել, ասում եմ յես.—Մենք ավելի լավ է քեզ կլսենք:

Վանկան-Ֆիմկային՝

— Իսկ դո՞ւ, Վե՛րտա, ինչու յես լռում:

Իսկ Ֆիմկան, բանից դուրս է գալիս, քնել է մեր պատմութլունների ժամանակ:

— Դե, դու ել մի՛ քաշքշի՛ պատմի՛ր,—վրա տվինք մենք Վանկային.—Ի՞նչ էս գես-գեն ընկնում:

— Դե հիմա լռեք,—ասում է Վանկան.—Գնում եմ յես փողոցով: Մայրիկս ուղարկել էր ինձ ծանոթների մոտ՝ փող

պարտք անելու: Իսկ մեր ծանոթները շատ լավ ծանոթներ էյին: Մենք նրանց հետ ամեն շաբաթ տեսնվում էյինք: Մեկ նրանք էյին գալիս մեզ մոտ, մեկ էլ՝ մենք նրանց մոտ:

— Դե, դու ել դեպքի մասին պատմի,— ընդհատեց Կեշկան:

— Հիմա դեպքի՛ մասին ե: Առաջ պետք է բացատրել: Ուրեմն եսպես, գնացի յես ծանոթներիս մոտ: Փող պարտք անելու: Իսկ փողը մեզ շատ եր անհրաժեշտ, փորովհետև մայրիկս խմորեղեն պիտի թխեր:

— Դու դեպքի մասին պատմիր...

— Սպասի՛, բոլորն ել կասեմ: Մի՛ շտապի... Տոներից առաջ եր: Մայրիկս ուզում եր խմորեղեն թխել: Այլուր կար, բայց լուր ու ձու չկար: Փող էլ չունեյինք: Ճիշտն ասած հայրիկը պիտի փող բերեր, եղ որը նրանց մոտ դործարանում ոտճիկ ստանալու որն էր, բայց յեթե նրան սպասեյինք, խմորեղենը չէյինք հասցնի և կոպերատիֆը ել կփակվեր:

— Դե դու ել ի՞նչ ես խմորեղենի պոչիցը բռնել, դու զարգանդի մասին պատմի,— նորից ընդհատեց նրան Կեշկան:

— Հիմա զարգանդի մասին: Ուրեմն եսպես, գնացի յես ծանոթներից փող պարտք անելու: Դուրս եմ յեկել մեծ պրոսպեկտը, գնում եմ և մտածմունքի մեջ ընկնում: Իսկ մտածմունքի մեջ ընկա նրա համար, վոր մեր դպրոցում մի խոսակցու թյուն կար...

— Դե դու ել մի գլուխ նրա մասին չես պատմում,— գոռաց Կեշկան:— Դու մեզ վրա ծիծաղում ես, ի՞նչ ե:

— Իսկույն յես հենց նրա մասին կպատմեմ, յես հենց դրան ել մոտեցա,— ասում է վանկան:— Ուրեմն եսպես, գնում եմ յես մտադրագ: Յեվ հանկարծ ուղիղ ինձ վրա— արամվայր: Նա գանգ է տալիս, իսկ ես ուղիղ ակների տակն եմ: Յես վոր չթու՛մ, թու՛ս ուղղակի մի կողմ, իսկ ենտեղ է ուղղակի ինձ վրա ավտոմոբիլը: Թռչում է դեպի ինձ և շշակները տալիս:

— Իսկ դու չես խափում,— հարցնում է Կեշկան:

— Իսկ ինչու պիտի խափեմ: Ասում եմ, վոնց վոր յեղել ա: Յես նորից թու՛ս: Հազիվ շունչս քաշեցի, վազում եմ

դեպի դարպասը, իսկ ենտեղից ել գրուզովիկն է խցկվում: Ինչ եր մնացել վրայովս անցներ: Յես հետ թու՛ս, և հանկարծ անկյունից գանգ, աղմուկ, փողերը փչում եմ— դուրս է թրչում հրդեհաշեջ խումբը:

— Սո՛ւտ ես ասում.— կանչեց Կեշկան.— Ազնիվ խոսք՝ սուտ ես ասում:

— Սո՛ւտ ես ասում.— կանչեցին բոլորը, բացի Պավլունկայից:

— Հա՛, ինչ վոր հավատալու բան չի,— ասաց Պավլունկան:

— Չեք ուզում, մի՛ հավատացեք,— ասաց վանկան:— Իսկ յես քնել եմ ուզում:

Յեվ իսկապես՝ յեկեք քնենք,— ասացի յես և պառկեցի Կեշկային ավելի մոտ, վոր տաքանամ: Բոլորս խմբվեցինք, հավաքվեցինք մի տեղ, թաղվեցինք խոտի մեջ: Երպես ել քնեցինք:

Առավոտը մենք նորից գնացինք դաշտ՝ աշխատողներին հետ: Իմ խոսակիցը կոխողի քարտուղար քեռի Պրոխորն էր:

Իսկ դուք գործունյա լակոտներ եք,— ասաց քեռի Պրոխորը:— Յերևի սկի չարություն չե՞ք անում:

— Չե, չարություն չենք անում,— ասացի յես. հետո ել ավելացրի՛

— Յերբեմն... շատ չե:

— Դե, ասաց քեռի Պրոխորը,— եղքանը ձեզ շտատով կարելի յե:

Յես չհասկացա. եղ վո՞նց թե շտատով էր, ինչ շտատով: Հենց ուզում էյի հարցնել, հանկարծ լսում եմ կանչում են՝

— Մի՛ շկա, Մի՛ շկա, Պետրո՛վ

Ուղղակի դաշտի միջով, լազերից մի պիտներ է վազում:

— Մի՛ շկա,— կանչում է պիտները,— վազի՛ լազեր, քեզ մոտ ձեր տանից մարդ է յեկել:

Նստեղ յես վոչ միայն քեռի Պրոխորին, այլև ամեն ինչ

ել աշխարհումս մոռացա: Ուղղակի տեղիցս թռա և մի շնչով վազել եմ մինչև լագեր:



Իսկ բազում կանգնած է մայրս, գլուխը կարմիր թաշկինակով կապած, իսկ ձեռքին էլ հովանոց և լրագրի մեջ փաթաթած մի կապոց:

— Մի՛ շենկա, եդ վո՛նց ես երվել, — ասում է մայրս: Ուսերիցս բռնել, նայում է ինձ, կարծես թե սկի չի տեսել: — Դու կարգին չաղացել ու հաստացել ես, իսկ յես ել միշտ մտածում եյի, հիվանդ հո չես, մի բան չի պատահել:

Շատեղ յես հեշեցի, վոր պիտի բարկանամ մայրիկիս վրա, ամսի տասի համար:

— Դու եդ ինչո՞ւ, — ասում եմ, — ամսի տասին չեկար: Բոլորի ծնողները յեկել եյին ու նվերներ բերել, իսկ յես ման եյի գալիս, առանց վոչնչի...

— Ա՛ռ քեզ, — ասում է մայրս և կոխում է ձեռքս լրագրի մեջ փաթաթած կապոցը: — Յես քեզ համար վարենիայով խմորեղեն եմ պատրաստել: Քո սիրածը — խնձորով:



Յես մորս ներեցի, նրա հովանոցը տվի դեկավարին պահ, խմորեղենները թաղցրի սենյակումս և մորս տարա զբոսնելու: Շրջեցինք ամբողջ լագերը: Յեղանք մեր անտառում, գետի մոտ, արոտատեղում, ուր Գրիշկան հոտն եր արածացնում:

Հետո մայրիկս մեզ մոտ ճաշեց, կոստյան թույլատրեց: Ճաշից հետո բոլոր տղաները քնեցին, կոստյան մենակ ինձ թույլատրեց չքնել մեռյալ ժամին. յես մայրիկիս հետ միասին նորից գնացինք զբոսնելու: Յեվ միայն յերեկոյան մայրս գնաց:

Իսկ հովանոցը նրան պետք չեկավ: Թե՛ յից հետո անձրև չեկավ:



Լագերը հայտարարվում է ուղղակի գրության սեյ: Լագերի մուսր յեվ յեյի անցագրերով է. Կարգա պահաթյունը խախտողներ պատվում են համաձայն ուղղակի գրության որեմների:

Մեզ մոտ ուղղակի խաղ է: Մենք բաժանվել ենք յերկու խմբի. մեկը՝ «կարմիրները» մյուսը՝ «կապույտները»: Կարմիրները փողկապներով են սովորական ձևով կապած, իսկ կապույտների փողկապները թևերին են կապված: Կապույտների հրամանատարը Ֆիմկա Վերստան է, կարմիրներինը՝ Վանկա Որեշկովը: Իսկ կոստյան ու Սառան դատավորներ են:

Յես ու կեշկան Վանկա Որեշկովի խմբում ենք: Մենք, հետախույզներն ենք: Մեր խնդիրն է՝ ինչ էլ ուզում է լինի՝ իմանալ հակառակորդի տեղը և ուժերի դասավորությունը: Են ժամանակ էլ կսկսվի պատերազմը:

Կոշիկներս հանած, մենք սողում ենք անտառակի միջով:

— Բա վոր հանկարծ նրանք մեզ բռնեն, — շշնջում եմ յես:

— Մենք կմեռնենք, և յերբեք անձնատուր չենք լինի, — ասում է կեշկան:

Հակառակորդը թաղնված է անտառում: Նրան գտնելը համարյա թե անհնարին է:

— Գիտե՛մ, — հանկարծ կանչում է կեշկան:

— Ի՞նչը գիտես:

— Ծառը. — ասում է կեշկան:

Յես նայում եմ շուրջս, ծառեր շատ կան, բայց նրանց վրա արտասովոր վոչինչ չկա:

— Ի՞նչ ծառ:

— Ամենաբարձրը, — ասում է կեշկան:

— Դե ի՞նչ ախր: Ո՞ւրա ամենաբարձրը:

— Պետք է գտնել բարձր ծառը, — ասում է կեշկան: —

Հասկանում ես: Մենք կբարձրանանք ծառի կատարը և ամեն
ինչ կտեսնենք:

47

Մենք գտանք մի բարձր նոճի: Նոճին անտառում
բոլոր ծառերից էլ բարձր է, բայց նրա վրա բարձրանալը
դժվար է: Բուռը կլոր է ու հարթ, վոչ վտաններով և վոչ է
ձեռներով չես կարող բռնել:

— Չենք կարող բարձրանալ, — ա-
սում եմ յես:

— Փորձենք, — պատասխանում է
Կեշկան: — Կանգնիր:



Յես դեմքով կանգնեցի ծառի մոտ,
և բռնեցի նրա վտաններից: Կեշկան բար-
ձրացավ ուսերիս վրա և բռնեց առաջին իսկ ճյուղերից:

— Իսկ հիմա ինչ. — հարցրի յես չարացած: Կեշկային
ուսերի վրա պահելն այնքան էլ դուրեկան չի:

— Իսկ հիմա յես կախ կրնկնեմ, դու ել իմ վտաններից բռնի
և վերև բարձրացիր, — ասաց Կեշկան ու կախվեց:

Յես կպա Կեշկայի գոտուց և վեր բարձրացա:

— Շուտ. — Ֆշշացրեց Կեշկան. — յես չեմ կարող պահել:

Յես թոա, բռնեցի վտաններով Կեշկայի գոտուց և ձրգ-
վեցի դեպի ճյուղը, բայց չհասցրի բռնել:

— Ընկնում եմ, — գոռաց Կեշկան, և ընկավ:

Հողը բավականին փափուկ էր ու մամուկալած:

Բայց մենք ընկանք նոճու փշերի վրա: Շիշկաները ճանկ-
ոտոտում են և նրա վրա ընկնելը ցավ է պատճառում:

— Դուրս չեկավ. — ասաց Կեշկան վերկենալով:

Մենք նայեցինք շուրջներս:

— Իմացա. — ասաց Կեշկան.

— Դե ելի ի՞նչ նորից:

— Հարևան ծառը, այ թե ինչ, —
ասաց Կեշկան և բարձրացավ կողքի կեշու-
ծառը: Յես էլ նրա հետևեցի:

Կեշու ծառը մենք հեշտությամբ
բարձրացանք, նա ճղներով էր: Իսկ կե-
շուց մենք անցանք նոճու ծառը: Մեջ-
տեղից նոճին սանդուխած էր, ճյուղը
ճղի հետևից: Մենք բարձրացանք ամե-
նաբարձր կատարը, բարձրացանք և
զարմանքից ախ քաշեցինք:

Մեր առաջ ամբողջ անտառակն ու
լագերը կարծես բռան վրա լիներ: Լագերի
մի կողմից մեր «կարմիրներն» էյին:
Իսկ մյուս կողմից՝ ձորակի մոտից — Ֆիմ-
կայի «կապույտներն» էյին: Կապույտ-
ներն առաջ են գալիս ձորակի կողքով:
Իսկ կարմիրները կանգնել և նայում են
անտառակին՝ մեզ են սպասում:

— Հանիր փողկապը, — շշուում է
Կեշկան:

Մենք քանդում ենք փողկապներս և սկսում ենք ողում
նշաններ տալ: Բայց մեզ չեն նկատում:

— Դմբրա՛ճ, ախմախներ, ապուռներ, — հայհոյում է Կեշ-
կան:

Մենք ճոճում ենք, հա ճոճում, մինչև անգամ ձեռքներս
հոգնեցին: Յեվ հանկարծ — ուռա՛, մեզ նկատեցին, տղաները
պատասխանում են մեզ փողկապներն ողի մեջ ճոճելով:

Կապը հաստատված է:



Ամենագոյնը դեռ մնացել է: Պետք է ազդանշաններով հաղորդել հակառակորդի տեղը:

— Դու ազդանշան տալը լսվ էս հիշում,—հարցնում է Կեչկան:

— Ավելի լավ է դու տուր ազդանշանը,—պատասխանում եմ յես:—Իսկ յես կապույտներին կհետևեմ:

Ազդանշաններ տալը մենք ձմեռն ենք սովորել: Բայց դե ձմեռվանից ինչքան ժամանակ է անցել:

— Իմ տեսողութունը լավ է,—ասում է Կեչկան:—Յես պիտի հետևեմ. դու չես նկատի:

— Յեթե դու չես իմանում, եղպես ել ասա.—ասում եմ յես:

— Իսկ դու իմանո՞ւմ ես:

— Քեզանից վոչ պակաս:

— Դե, դու ել կտաս: Դե տո՛ւր՝ «ձորակի մոտ»:

Յես ազդանշանը տվի—«սկսում եմ»:

Վանկա Որեշկովը լագերից պատասխանեց—կա:

Յես տվի «ձ»:

Իսկ ինչպես տալ «ո»-ն,—մոռացել եմ: Աշխատում եմ վերհիշել, հուզվում եմ, իսկ վերհիշել չեմ կարողանում:

— Կեչկա, «ո»-ն վո՛նց է,—հարցնում եմ յես:

— Չեմ հիշում: Իսկ դու «ա»-ն հիշո՞ւմ ես:

— «Ա»-ն հիշում եմ:

— Դե, «ո»-յի փոխարեն «ա» տուր:

Յես եղպես ել արեցի: Տվի «ձորակի մոտ»: Տվի և հենց կարծես թե դիմամբ հիշեցի թե «ո»-ն վոնց են տալիս՝ յերեք զիծ—նշանակում է յերեք անգամ յերկու գրոշակները վերև բարձրացնել:

Վանկան լագերից հարցնում է՝

— Ո՛ւր են գնում:

Յես հայտնեցի՝

— Դեպի գետակը:

Մենք Կեչկայի հետ խորհրդակցեցինք, և յես հայտնեցի՝

— Շրջապատեք անտառակի կողմից:

Վանկան չհասկացավ, հարցնում է՝

— Ի՞նչ:

Յես կրկնեցի՝

— Շրջապատեք:

Վանկան դրոշակներով նշան տվեց, վոր հասկացավ, և մենք տեսանք, թե վո՛նց մեր խումբը բաժանվեց յերկու մասի:

Մի մասը գետի ափով գնաց դեպի ձորակը, մյուսն էլ՝ շրջելով անտառակի կողմից, վորպեսզի թիկունքից խփի:

Իսկ «կապույտներն» անտառակին են նայում, սպասում են ուղիղ հարձակման:

Գետակի մոտ բուսել են բարձր ծառեր: Կապույտները թագնվել են ծառերի հետևում: Յեվ հենց ենտեղ ել սողալով առաջ են գնում կարմիրները:

Մենք այլևս չենք տեսնում, վոչ կարմիրներին և վոչ ել կապույտներին: Նրանք ծառերի հետևն են: Ահա, վորտեղ վոր է կհանդիպեն:

Կեչկան բարձրացավ ծառի ամենածայրը, նրա վոտների տակ ձղները թեքվում էին:

— Չի յերևում,—ասաց նա տխուր:—Ծառերը խանգարում են:

Յեվ հանկարծ գոռում է՝

— Տե՛ս, մերոնք:

Յես յերկարում եմ զլնւխս և նայում այն կողմը, ուր ցույց է տալիս Կեչկան. ձորով, քոլից-քոլ թռչելով՝ առաջանում է կարմիրների յերկրորդ խումբը: Եղ նրանք են, վոր ուղարկված են կապույտներին շրջապատելու: Նրանք հասնում են կապույտներին:

— Յերկու կողմից կհարձակվեն,—հիացմունքով շշնջում է Կեչկան: Ախ, յերանի թե մենք տեսնելինք:

Յեվ հանկարծ գետակի կողմից լավում են ձայներ և թրխոցներ: Մերոնք կանչում են «ուռա՛»: Իսկ դուցե դրանք մերոնք չեն, այլ կապույտներն:



Մենք տեսնում ենք թե ինչպես ձորով, այլևս առանց թագնվելու, վազում են կարմիրները: Նրանք շրջապատում են—նրանց, կապույտների թիկունքից հարձակվելը պիտի վորոշի կովի դրուժյունը: Իսկ գետակի մոտ քանի գնում, ավելի ուժեղ են գոռում ու ճվվում տղաները:

— Կովում են.—կանչեց Կեշկան և իջավ ցած:—Վազենք էնտեղ, շուտ:

Հասանք մենք ուղղակի լեզուներս հանած: Հոգնել ենք, վոչ մի կերպ չենք կարողանում ազատ շունչ քաշել: Իսկ էնտեղ ենպիսի շփոթ և ստացվել, վոր սկի չես ել հասկանա թե ո՛վ վորտեղ է: Տղաները խմբվել են կարմիրների դրոշակի շուրջը, իսկ կապույտներն իրենց դրոշակը մի կողմ են տարել և մի պիտոների ել պահակ են կանգնեցրել: Մերոնք տաքացած սկի չեն ել նկատում:

Իսկ ծառի վրա նստած է Կոստյան՝ սուլիչը ձեռքին: Յեթե վորևե մեկը բուռնցքն սկսում է գործի դնել, Կոստյան սուլում է և կովարարը խաղից դուրս է գալիս: Յեթե մեկն ու մեկը անազնիվ է խաղում՝ վոտք է զցում, կամ ավազ շող տալիս—նորից սուլում է: Մեզ մոտ խիտս կանոններ են:

Յես ու Կեշկան, հենց վոր շոկեցինք թե բանն ինչու՞ն է, հարձակվեցինք կապույտների դրոշակի վրա: Իսկ պահակ եր կանգնել հաստափոր Վովկան—դե նա ինչ կարող է պահպանել: Վովկան դրոշակը գցեց գետին և ինքն ել ընկավ վրան:

Յես Վովկայի ուսերիցն եմ քաշում —տեղիցը չի շարժվում, Կեշկան ել՝ վոտներից: Ելի չի շարժվում, կար-

ծես թեկ կպել է դրոշակից, վոչ մի կերպ պոկել չի լինում: Իսկ եղ ժամանակ կապույտներից յերկու հոգի ոգնության յեկան, մենք ստիպված նահանջեցինք:

Թուանք մենք Վանկային ոգնության: Իսկ էնտեղ թավալ է: Ժողովուրդը քիչ եր մնացել, հինգ հոգի շարքից դուրս էյին յեկել, վորովհետև կովում էյին, իսկ ութ հոգի ել գերիններ էյին՝ գերինները պիտոներն էյին կոչվում, վորոնց փողկապները խլում էյին:

Իսկ մենք Կեշկայի հետ առանց փողկապների վրա վազեցինք—տաք կովի մեջ եղ վոչ վոք ել չնկատեց:

Յեվ հանկարծ սուլիչ՝

— Մալա՛գին և Պեարս՛վ, ինչո՞ւ չեք առանց փողկապների: Անցեք մի կողմ:

Ստիպված էյինք մի կողմ անցնել և փողկապներս կապել: Իսկ եղ ժամանակ Վանկային ուղղակի ձորի յեզրը քշեցին: Մի կողմից ձորն է և էնտեղ ել շուր, իսկ մյուս կողմից ել կապույտներն են գոռում: Վանկան բարձրացրել է դրոշակը զլխի վրա, պաշտպանվում է. իսկ նահանջելու տեղ արդեն չկա—մնում է ձորը:

— Չորից հեռու—գոռում է Կոստյան և սուլում ինչքան գոռումը կա: Ել ուր:

Վոչ վոք ել չի լսում:

Իադարեցրե՛ք—կանչում է Կոստյան և ծառից ցած թրուչում: Վազում է դեպի ձորի յեզրը և սուլում: Բայց եղ ժամանակ Ֆիմկան թռչում է դեպի Վանկան և ձեռքը յերկարում: Նա յերկարահասակ է, ելի մի վայրկյան մեր դրոշակը պիտի անցնի կապույտների ձեռքը: Իսկ մենք չենք ել կարող մոտենալ: Կապույտները կրկնակի ողակով չըջապատել են Վանկային: Մի մասը հարձակվում է Վանկայի վրա, մյուս-



ներն ել չեն թողնում կարմիրներին ողնութեան հասնեն:

Յե՛վ հանկարծ—Վանկան թռավ, և նա այլևս չկա: Վոչ նա, վոչ ել դրոշակը: Միայն ջրի ճղփյուն:

Միանգամից բոլորը լռեցին և տեղներումը քարացան: Ֆիմկա Վերստան, վոնց վոր ձեռքը բարձրացրել էր, ենպես ել մնաց կանգնած: Միայն մի աղջիկ ճչաց և ձեռքերով դեմքը ծածկեց:

51

Մեզանից վոչ վոք չնկատեց, թե վո՛նց կոստյան թռավ ներքև: Մենք այդ հասկացանք են ժամանակ, յերբ ջրի նոր ճղփյուն լավեց և Վանկայի ձայնը՝

— կոստյա, դե յես հենց ենպես դիտմամբ:

Մենք բոլորս ել կոացանք ձորի յեզերին: ջրի մեջ շուռ ու մուռ եյին գալիս Վանկա Որեշկովը և կոստյան՝ ափ հանելով ծանր, ջրից ուռած դրոշակը:

— կենդանի՛ յես—կանչեցի յես Վանկայի գլուխը տեսնելով:

Վանկան ներքևից պատասխանեց՝

— Դե, ախր յես դիտմամբ արի: Դրոշակը հո չպիտի տայի:

կոստյան լռեց:

Յերկուսն ել թրջված—կոստյան ու Վանկան դուրս յեկան ափ: Մենք նրանց ողնեցինք վեր բարձրանալ: Յես ուզում եյի մի վորևե բան ասեմ, բայց դե ի՛նչ: Ա՛յ սրանք իսկական հերոսներ են:

— Գնանք լագեր, քանի չենք մրսել,—ասաց կոստյան և շրթունքը կծեց—նա բարկանում էր:

— Իսկ հաղթութունն ո՞ւմն է—հարցրեց Վանկան:

— Հետո մենք կորոշենք,—ասաց կոստյան և անցավ առաջ: Նրա վրայից ջուրն էր կաթկթում:

Վանկա Որեշկովը մեզ հետ միասին գնաց: Մենք բոլորս նայում եյինք նրա վրա, վորպես հերոսի: Ամեն մեկը ձորից չի թռչի ջուրը՝ դրոշակը փրկելու համար:

52

Յե՛վ ճաշի վրա, և՛ մեռյալ ժամին, և՛ լագերի խորհրդում, և՛ ընդհանուր հավաքույթում—ամբողջ ուրը քննում եյին խաղի վերջավորութունը:

կոստյան բարկանում էր: Նա ամբողջ ժամանակ որորում էր գլուխը և չէր ուզում խոսել մեզ հետ Վանկա Որեշկովի վարմունքի մասին:

— Հավաքույթում կխոսենք,—պատասխանում էր կոստյան, և մենք ել վոչ մի կերպ չեյինք կարողանում հասկանալ՝ Վանկային կհասնի՞ թե չէ:

Բոլորն սպասում եյին հավաքույթին: Հենց վոր ազդանշանը տվեց, բոլորն ել վարչկյանաբար շարք կանգնեցին: Ի՛նչ կասի արդյոք կոստյան:

Այ թե ի՛նչ ասաց կոստյան՝

— Տղե՛րք, այսոր դուք ուղմական խաղը վատ եյիք խաղում: Ինչո՞ւ համար վատ: Վորովհետև դուք կանոններին չեյիք հետևում և կատարում: Դուք սուլիչները չեյիք լսում: Ստացվեց վոչ թե խաղ, այլ տուր ու դմփոց: Յե՛վ վտանգավոր տուր ու դմփոց:

Մեկը կանչեց՝

— Իսկ հաղթանակն ո՞ւմն է:

— Քանի վոր դուք վատ եյիք խաղում ել ի՛նչ հաղթանակ,—ասաց կոստյան:

Ֆիմկան ձեռքը բարձրացրեց:

— Դե, մենք միշտ ել կանոնավոր եյինք խաղում,—ասաց նա:—Մենակ թե վերջում տաքացանք, սպորտի ընկանք:

Ֆիմկան կմկմաց, կարմրեց և հանկարծ վրա տվեց՝

— Դրա դիմաց մենք ցույց տվինք, վոր վախկոտներ չենք, և վորևե քանի դեպքում մենք չենք փախչի:

— Ճի՛շտ է,—կանչեցին տղաները:—Վանկան կլանքը ուխկի յենթարկեց: Ճի՛շտ է

կոստյան գլուխն ուրորեց:

— Ա՛յ, դուք ասում եք՝ ճիշտ է: Վանկա Որեշկովը քաջ գտնվեց, իր դրոշակն ազատեց: Նա իրեն կլանքը վտանգի

յենթարկեց: Իսկ նա իրավունք ունէր խաղի համար եղպես վարվել:

Մենք լուռ եյինք:

— Այ, դուք ասացեք: Յեթե քաջ Վանկա Որեշկովը ետր խեղդվեր, ո՞վ կպատասխաներ նրա համար: Ի՞նչ կասելին ծնողները պիտներական կազմակերպության մասին: Թող ձեզնից ամեն մեկը մտածի—ձեր ծնողները կթողնեյին մյուս ամառը լազեր:

Յես հիշեցի մորս:

— Չե՛—ասացի յես բարձր:— Չե՛ր թողնի:

— Չե՛

— Չե՛

— Չե՛—պատասխանեցին և մյուս տղաները:

— Դե, ուրեմն, եսպես,—ասաց Կոստյան: Նշանակում ե՛ Վանկա Որեշկովը վոչ միայն իր կյանքը վտանգի չենթարկեց, այլև ամբողջ կազմակերպության ավտորիտետը:

— Դե, յես ախր լավ լողալ գիտեմ—կանչեց Վանկա Որեշկովը:—Յես ախր գիտելի, վոր չեմ խեղդվի:

Բոլորը ծիծաղեցին:

— Ուրեմն, եսպես, տղե՛րք,—ասաց Կոստյան:—Յեկեք եսպես վորոշենք: Առաջինը՝ մենք զտնում ենք, վոր Որեշկովը հերոսություն, քաջություն գործեց—պաշտպանելով գրոշակի պատիվը: Բոլոր պիտներները պետք է պատրաստ լինեն, յեթե հարկ լինի, այնպես վարվելու:

— Ճիշտ ե: Մենք պատրաստ ենք,—կանչեցինք մենք:

— Բայց,—ասաց Կոստյան և ցուցամատը վեր բարձրացրեց:—Բայց ի՞նչ:

— Յես ախր լավ եմ լողում,—նորից կանչեց Վանկան:

— Դե նա ախր լավ է լողում,—հաստատեց Ֆիմկան:

— Նա բոլորից լավ է լողում,—կանչեցի յես:

— Բանը գրանում չի, պատահականություններ են լինում,—ասաց Կոստյան:—Դրա համար ել, լերկորդը՝ չնայած Որեշկովը պիտների քաջություն ցուցաբերեց, բայց նա առանց մտածելու չէ վարվել: Մենք դատապարտում ենք նրան նրա

համար, վոր նա քաջություն ցուցաբերեց են ժամանակ, չերբ դա կարող եր ֆլասել կազմակերպությանը և պիտներական ամբողջ գործին: Չի կարելի խաղի համար հիմարություններ անել, վոր կարող եր ֆլասել բոլոր պիտներներին:

Կոստյան նայեց Վանկա Որեշկովին:

— Դե՛, վո՞նց է, Որեշկով, դու ինձ հետ համաձայն չե՞ս:

Վանկան նոթերը կիտեց և կարմրեց:

— Համաձայն եմ,—մոթմոթաց նա:—Մենակ թե ախր, յես լավ լողում եմ:

Յերբ մենք յեկանք լազեր, յես մտածում եյի՝ առաջներս դեռ մի ամբողջ ամիս ժամանակ կա:

Իսկ հիմա, ամիսը վերջանում է և վոչ վոք ել չնկատեց, թե ժամանակը վո՞նց թռավ:

Մենք պատրաստվում ենք վերջին խարույկին: Վերջին խարույկը պիտի վառվի լերեկոյան մեկնելուց առաջ: Մենք մեծ տառերով հայտարարություն գրեցինք և գյուղում կախեցինք:

Հուլիսի 30 ին պիտներական լազերում վերջին խարույկն է
1. Կոլխոզային խմբի պիտներները հանդիսավոր խասում պիտի ան:
2. Զույց լազերի արդյունքի մասին:
3. Պիտներների ինֆուգործ յելույթները:
Հրավիրվում են կոլխոզի բոլոր սեծահասակները յեվ տղաները:

Յերեք որ առաջ, առավոտյան, գրոշակը բարձրացնելու ժամանակ, Կոստյան ասաց՝

— Տղե՛րք, մեզ մոտ հայտարարված է, վոր խարույկում կլինեն պիտներների յելութներ, Ամեն մի պիտներ, մի վորեն համար պիտի պատրաստի: Ով վոր պատրաստել է, ձեռք բարձրացնի:

Վոչ վոք ձեռք չբարձրացրեց, բոլորը նայում էին շուրջը և միմյանց հրում:

— Յես տեսնում եմ, — ասաց Կոստյան, — վոր խարույկում յելույթներ չեն ինի: Դե ել ինչ, դա ձեր գործն է: Հրամանով ինքնագործունեյություն չի կարելի ստեղծել:

Նախաճաշից հետո անմիջապես սկսվեցին խորհրդակցություններ — ո՞վ պիտի յելույթ ունենա: Աղջիկներն ամբողջ խմբով փախան անտառ և տղաներից վոչ վոքի չթողին:

— Կարող եք ինքներդ մտածել, — ասաց ժենկա Կովալյովան: — Մենք ձեզ համար չենք մտածի:

Իսկ Վերա Սմիրնովան կանչեց՝

— Եխ, դուք, հանձնաժողով, միթե դուք վոչինչ չեք պատրաստի:

Իսկ յերրորդն ավելացրեց՝

— Իոք մենակ դարմադալ եք կարողանում... հանձնաժողով:

Մեզ արդեն չեն անվանում «յեռյակ», այլ «հանձնաժողով»:

— Եհե՛, — ասաց Վանկա Որեշկովը: — Մեզ վրա, տղերք, ամբողջ աշխարհն է նայում: Պետք է չխայտառակվենք:

54

Մենք յերեքով փակվեցինք մեր սենյակում: Ֆիմկան դուռը ձեծեց, բայց մենք բաց չարինք: Տղաները գնացին անտառ զբոսնելու, իսկ մենք նրանց հետ չգնացինք:

Մենք Ֆիմկայի և զբոսնելու հետ գլուխ չունեցինք: Մենք սեղանի վրա շարեցինք՝ ներկեր, ածուխ, կավիճ, գույնզգույն լաթի կտորներ: Գույնզգույն լաթերից ու աղջիկներից գողացած ժապավեններից Կեշկան լեռանկյունի փոքրիկ կտորներ է ձևում: Յես այդ կտորներն անց եմ կացնում հաստ թելի վրա: Վանկա Որեշկովը, մինչև գոտին մերկ, իրեն կուրծքը նախշում է ակվարելի ներկերով:

Մենք — հնգիկներ ենք: Վաղը չե մյուս որը հրաժեշտի խարույկի վրա կկայանա մեր յելույթը:

ՎԱՅՐԵՆԻՆԵՐԻ ՊԱՐԸ

Պարելու համար մենք չենք անհանգստանում: Մենք գիտենք թե վոնց պիտի պարել՝ փայտը ձեռքին, ավելի շատ գոռալ և ձեռքերով թափահարել: Եդ մենք կարող ենք: Ամենագլխավորը հնգիկների նմանվել: Դրա համար մենք մեզ մինչև գոտիներս կնախշենք ներկերով և ածխով, գլխներիս կհագնենք փետուրներից զարդարանքը, իսկ վարտիկներիս վրա կկարենք զանազան կտորներից ու ժապավեններից շերտեր:

— Պետք է, — ասում է Կեշկան, — շուտ դուրս թռչել, պարել և փախչել, վոր չճանաչեն:

55

Մեր համարը պատրաստ է: Մենք լրիվ փորձ կատարեցինք՝ մինչև գոտիներս նախշեցինք մեզ զանազան ներկերով և վարտիկներիս փակցրինք շերտեր: Յես հայելի չունեյի, վոր ինքս ինձ նայելի, բայց Վանկան ու Կեշկան իսկական հնգիկներ են դուրս չեկել: Յերևի յեք ել եմ եզպես:

— Հիմա, — ասաց Կեշկան, — պետք է իմանալ թե ինչ են պատրաստել մյուսները:

— Մեզանից լավ բան մտածած չեն լինի:

— Ի հարկե՛ մտածած չեն լինի, — ասացի յես:

— Բայց այնուամենայնիվ պետք է իմանալ, — ասաց Կեշկան:

Վորոշեցինք տեղեկանալ Դե, բա տղերքը կասեն: Բոլորն անկյուններում փսփսում են: Մենք մտանք ընթերցարանը, իսկ ենտեղ յերկու աղջիկ և յերեք տղա, ինչ վոր բան էյին ներկայացնում, վոնց վոր պիեսում լինեն:

— Կորե՛ք, կորե՛ք, կորե՛ք դուրս, — գոռացին նրանք խրմբով և դուռը քթներիս տակին թրխկացրին:

Մենք ճաշարան գնացինք: Իսկ ենտեղ Սաշկա Կորենկովը նստարանի վրա կանգնած, վոտանավոր եր կարդում: Իսկ նրա առաջն իր ամբողջ ողակը նստած լսում է: Մեզ տես-

ներուն պես բոլորը վեր թռան, և Սաշան ել դադարեց կարգալուց:

— Գնացե՛ք, լսելու կարիք չկա,— կանչեցին տղաները և ճաշարանից մեզ դուրս արին:

Մենք գնացինք անտառ: Ենտեղ դաշտավայրում աղջիկները խմբվել և ինչ վոր խորհրդակցում են:

Մենք կամացուկ անցանք և ծառերի հետևը թագնավեցինք: Աղջկերքը մեզ չեն տեսնում, մենք ել նրանց չենք լսում: Չախներ, աղմուկ լսում ենք: Իսկ ինչն ինչու համար ե, չենք ջոկում:

— Յես քո սարաֆանն եմ:

— Ինձ հուշունքներ են հարկավոր:

— Գլխավորը, վոր չծիծաղենք:

— Սավան ե պետք:

Դե ո՞վ կհասկանա ետեղ, թե բանն ինչու՞ է: Մենք լսեցինք, լսեցինք, վոչինչ չհասկացանք: Իսկ յես հոգնեցի կոացած կանգնել, ուղեցի ճղան վրա հենվել, իսկ ճյուղը վոնց ա ջարդվում:

Ճվճվացին աղջկերքը և ամբողջ սուբույով մեզ վրա յեկան:

— Տղաները,— կանչում են աղջկերքը, տղաները լսում են:

Մենք հագրվ փախանք:

Իսկ մեր հետևից ժենկա կովալյովը կանչում է՝

— Հրա դեռ մինչև անգամ հանձնաժողով ա:

Գոնե մի ուրիշը գոռար, թե չե՛ ժենկան ախր ինքն ել ե հանձնաժողովի մեջ:

Փախանք մենք աղջիկներից և յեկանք մեր սենյակը: Իսկ ենտեղ դուռը կողպած ե կեռով:

— Ե՛յ, ո՞վ կա ենտեղ,— կանչեց Վանկան— բաց արա:

Ֆիմկան դռան հեռից պատասխանեց՝

— Սպասեցե՛ք տղերք, մենք ետեղ պատրաստվում ենք:

— Ելի ուղիո յես շինում:

— Ա՛յ, կտեսնեք:

Դե բաց արա դու ել, մենք չենք խանգարի:

— Յերբ վոր վերջացնեմ, են ժամանակ ել բաց կանեմ:

Դոնից անցանք մենք մի կողմ և կանգ առանք:

— Իսկ ում հետ ե նա,— հարցնում ե Վանկա Որեշկովը:

— Հիմա կիմանանք,— ասում ե կեշկան:

Մատների վրա մոտեցավ դռանը, ախանջ դրեց և հետ փախավ՝

— Տղե՛րք, ենտեղ Վովկան ե:

— Հաստափոր Վովկան:

— Վովկան-հաստափորը:

Եղ արդեն շատ հետաքրքիր ե: Եղ ի՛նչ կարող են ներկայացնել Վովկան ու Ֆիմկան:

— Գլխեմ,— ասում ե կեշկան:

— Դե ինչ:

— Հիմա կտեսնենք:

— Վոչինչ չբացատրեց, հանեց կոշիկները և ինձ ել իր հետ քաշեց դեպի դուռը:

Իսկ դռան հետևից ինչ վոր ճախեր են լսվում և ծիծաղ: Մեկ Ֆիմկան ե ծիծաղում, մեկ՝ Վովկան, մեկ ել՝ յերկուսը միասին:

— Կանգնիր ետեղ,— շնչում ե կեշկան:— Իսկ յես կբարձրանամ ուսերիդ ե կնայեմ:

Մեր սենյակի դռան վերևը մի փոքրիկ լուսամուտ կա, առաջ նրան ապակի յեր անցկացրած, բայց հետո կտարեցին:

— Չե, ետեղ արդեն ներողություն կանես,— շնչում եմ յես,— դու կանգնիր, իսկ յես կբարձրանամ: Յես քեզանից թեթև եմ:

Կեշկան դեմքը կնձոտեց, բայց կանգնեց: Յես թոա նրա մեջքին: Յեվ հանկարծ դռան հետևը



ամեն ինչ լուց: Լսեցին մեր ձայնը: Մենք սուս կացանք՝ դռան հետեն ել սուս կացան: Հետո ել Ֆիմկան ինչ վոր բան ասաց, յերկուսն ել խելագարի պես սկսեցին ծիծաղել:

— Բարձրացիր, — շնչում ե կեղկան: — Ծանր ե ինձ համար:

Յես կանգնեցի կեղկայի ուսերին, բռնեցի դռան շրջանակից և ներս նայեցի: Բայց դեռ վոչինչ չտեսած, հանկարծ ինչ վոր կոշտ բան շրջիկ — ուղղակի քթիս: Յես ճչացի և պոկվեցի:

— Հը՞, ձեր քիթը սաղ մնաց, թե չե, — հարցնում ե Ֆիմկան, դուռը բանալով և ներքևից իր կիսակոշիկը վերցնելով: Եդ նա ինձ կիսակոշիկով հասցրեց ուղղակի քթիս:

57

Հասավ վերջին յերեկոն: Ընթրիքը մեզ տվին սովորականից ավելի լավ՝ մսից կատլետներ և վարենիայով կաշա:

Հենց սեղանատնից դուրս յեկանք թե չե, մեր հյուրերն սկսեցին հավաքվել: Առաջ յեկան գյուղական տղաները, հետո՝ մեծահասակ կոլխոզնիկներից մի տասը հոգի և նրանց հետ ել՝ քեռի Պրոխորը:

— Վառի՛, — կանչեց Կոստյան:

Մենք ել հենց դրան եյինք սպասում: Առավտովանից ահադին ճղներ ու վառելանյութ եյինք պատրաստել: Խարույկը պատրաստեցինք — ճղները լցրինք, լուցկին տվինք և մի հրաշալի խարույկ ստացվեց: Ճտճտացին չոր ճղներն ամբողջ լազերով մեկ, բոցը հասավ համարյա թե կարի ծայրը, ծուխն ել քուլա-քուլա բարձրացավ ուղղակի յերկինք: Իսկ մենք ել նստեցինք մեր սարքած նստարանների վրա — յերկու կոճղի և նրանց վրա ել՝ մի տախտակ. նստի ու շուռ մի արի, թե չե՝ կարելի յե թուչել: Հյուրերն ել նստոտեցին, իսկ գյուղական պիոներները շարք կանգնեցին:

Յերեկույթն այսպես չընթացավ, ինչպես վոր հայտարարված եր, այլ ընդհակառակը՝ առաջ մենք լազերի ար-

դյունքներն եյինք արձանագրում, հետո ել նորեկներն իրենց հանդիսավոր խոստումն եյին տալիս:

Լազերի արդյունքների մասին խոսում եր Կոստյան:

— Ընկերներ, — ասաց Կոստյան: — Մենք մի ամիս ե ետեղ ենք ապրում: Ի՞նչ ենք ձեռք բերել եդ մի ամսվա ընթացքում: Կամ դուցե մենք վոչինչ ձեռք չենք բերել:

— Ձեռք ենք բերել, — կանչեցին ամեն կողմից մերոնք և գյուղացիները:

— Մեզ մոտ ամեն ինչ լավ չի յեղել, բայց այնուամենայնիվ մենք շատ բան ենք արել, — ասաց Կոստյան: — Առաջին՝ մենք բարեկամացել ենք գյուղի տղաների և կոլխոզի հետ: Մենք ոգնեցինք կոլխոզնիկներին, կազմակերպեցինք նրանց հանգիստը, խրճիթը և այլն: Մենք ոգնեցինք կազմակերպել կոլխոզի պիոներական խումբ: Այսօրվա ամենամեծ ուրախությունը քսաներկու նոր պիոներներն են:

— Ուրա՛ — կանչեցինք մենք և սկսեցինք ծափահարել: Նոր պիոներներն ել ծափահարեցին՝ ախր նրանց համար ել ե ուրախություն:

Յերկրորդ՝ բոլոր տղաները չաղացել են: Վաղը մենք կիմանանք թե ի՞նչքան են ավելացրել նրանք իրենց քաշը, բայց գիրացել են բոլորը — այդ նույնիսկ նկատելի յե: — Կոստյան ձեռքերը խրեց մագերի մեջ, նայեց մեզ բոլորիս և ասաց — բոլորն ել հաստացել են ու այրվել սևացել: Ընը՛, որինսակ՝ Վովկան քիչ ե չաղացել:

Մենք ծիծաղեցինք, իսկ Վովկան գլուխը բարձրացրեց և ասաց՝

— Մի՛թե քիչ ե:

— Յերբորդ և ամենազլխավորը, — ասաց Կոստյան, — մենք սովորեցինք հաշտ և ուրախ ապրել միասին: Սկզբներում տղերքանց համար դժվար եր: Ամեն մեկն ամուր կպել եր իր գավաթին, ափսեյին, ամեն մեկը առանձնացած՝ մենակ իր քաղցրավենիքն եր կրծում: Իսկ հետո մի հաշտ և համերաշխ ընտանիք դարձան: Ճիշտ եմ ասում, յես, տղերք:

— Ճիշտ ե:

— Կային մեզ մոտ նաև կովարարներ, քյալագյոզներ, —
ասաց Կոստյան:— Այդ քյալագյոզները քիչ եր մնում մեր
լագերը խառնաշփոթ դրուժյան մեջ դցեյին: Իսկ հիմա ուր են
եզ քյալագյոզները: Ամիսն անցավ, ապրեցինք ուրախ,
տխրելը՝ չտխրեցինք, պատժելուն՝ վոչ վոքի չպատժեցինք,
բայց այնուամենայնիվ վոչ վոք ել քյալագյոզություն չարեց:
Ճի՛շտ եմ ասում յես:

— Ճի՛շտ ե՛:

Կոստյան լռեց, նայեց մեզ և հարցրեց՝

— Տղերք, ձեզանից ել ո՞վ չի ուզում լագեր գնալը:

Վոչ վոք չպատասխանեց:

— Իսկ մյուս ամառ ո՞վ կգա լագեր:

— Յե՛ս, յե՛ս, յես:

Հիսուն յերեք կոկորդից, ինչպես մեկը, գոռացին «Յե՛ս»:

Իսկ մեր հյուրերը կանչեցին՝

— Յեկեք, ա՛նպայման:

58

— Վանկա Որեչկովն անցավ շքանի կենտրոնը, մի վոսքը
դրեց առաջ և նվագեց փողը:

Կոխոզավոր դեկավոր Պրոնկա Փոմինը ձառ արտասա-
նեց: Նա խոսեց այն մասին, թե ինչպե՛ս պետք է պահել
հանդիսավոր խոստումը, և շնորհակալություն հայտնեց մեր
լագերին՝ ոգնության համար:

Գյուղական պիոներները պատվի նշան տվին: Պավլուն-
հան առաջ անցավ և սկսեց արտասանել հանդիսավոր խոստ-
ման խոսքերը, իսկ մնացած մյուս տղաները նրա հետևից
կրկնում էին՝

— Յես պասանի պիոներս, ընչեցեցիս առաջ հանդի-
սավոր խոսումն եմ ասիս, վո՛ր՝

Ամուր կերպով կպառսպանեմ, վողջ աշխարհի բանվոր-
ների յե՞վ գյուղացիների ազատության համար, բանվոր դասա-
կարգի կողմից մովելի՛ք պայտար:

Ազնվորեն յե՞վ անեղ կերպով կկասարեմ Իլլի՛ի պաս-

գասներ, պասանի պիոներների որե՛նքնե՛րն ու սովորաթյուն-
ներ:

Սառան բերեց նախորոք պատրաստված փողկապները:
Նոր պիոներները մեկ-մեկ մոտենում էլին Սառային, և Մ սառն
հագցնում եր փողկապները: Մենք կանչեցինք լոգունդը՝

— Փոխարինողներին փոխարինող է գալիս:

Թմբեկահարներն սկսեցին թմբեկահարել, իսկ Վանկա Որեչ-
կովն ել փչեց փողը: Գեռի Պրոխորը վեր կացավ և ասաց՝

— Ամբողջ կոխոզի անունից շնորհակալություն եմ հա տ-
նում ձեզ մեր տղաների համար: Յերեկոյթի համար ել եմ
շնորհակալ—ձեզ մոտ գոռ է դուրս գալիս: Յեթե մորուքս
չլինեք, յես ել պիոներ կգրվեյի:

Տղաների անունից հովիվ Գրիշկան ասաց՝

— Մենք կարծում էյինք, թե դուք խաղեցինի գավակ-
ներ եք և կաթ խմելու համար եք յեկել, իսկ դուք պիոնե-
րական ձևով մեզ ոգնեցիք: Մենք ձեզ չենք մոռանա, դուք
ել մեզ մի՛ մոռացեք:

— Մենք ձմեռը կգանք ձեզ մոտ, — կանչեց Վանկան:

— Դուք ել մեզ մոտ քաղաք յեկեք, — ասաց Կոստյան: —

Մենք կաշխատենք ձմեռը ձեզ համար եքսկուրսիա կազմակերպել
դեպի քաղաք: Ուզո՞ւմ եք:

Ուժեղ աղմուկ բարձրացավ, շատերը նստարաններից
վեր թռան, իսկ բոլոր պիոներները խմբով արտասանեցին
պիոներական լոգունդը և կանչեցին «ուռա՛»:

59

Կոստյան տաս ընդե՛րն ընդմիջում հայտարարեց: Մենք
գլխապատառ վազեցինք սենյակ՝ հագնվելու: Ի դեպ՝ ենքան
ել շատ աշխատանք չկար անելու: Մարմիններս մենք նախշել
էլինք դեռ մինչև ընթրիքը և շապիկներս հագել, փոր վոչ վոք
չնկատի: Մնում եր միայն դեմքներս նախշելինք և զոխավոր
վարտիկներս հագնեյինք:

Վանկան հանեց շապիկը և շքմեց:

— Ի՛նչ է պատահել:

— Ներկա իջել է...

Մենք նայեցինք և շմեցինք: Վանկան խարուչկի մտահանգնած ժամանակ քրտնել էր և մեր բոլոր նախշերը գուշները տվել էլին, մենակ կեղտն էր մնացել: Դրա դիմաց, շապիկը բոլորը նախշված էր:

— Ներկերը շո՛ւտ, — ասաց կեղևան և վերցրեց վրձինը: — Ուղի՛ղ կանգնիր, Վա՛նկա:

Յե՛վ լերեք ըոպելից հետո, Վանկան նորից նախշված էր ինչպես իսկական հնգիկ: Մենք փաթաթվեցինք վերմակների մեջ, վորպեսզի մեզ ժամանակից առաջ չնկատեն, և նորից վազեցինք բակ:

Խարուչկն առաջվա պես վառվում էր: Ինքնագործունեություն չեղան յերեկոն արդեն սկսվել էր:

Ա՛յ թե ինչ էլին պատրաստել տղաները՝ «Քյալլագյոգներ» — փոքրիկ պիեսը: Յես բոլորը չտեսա, մենք սկզբին ուշացել էյինք: Չորս քյալլագյոգների ընտրեցին քյալլագյոգների դեմ պայքարող հանձնաժողովի մեջ: Քյալլագյոգներն իրենք իրենց դեմ կռվում էյին, իրենք իրենց ձեռում էյին, իրենք իրենց ձեռքերը կապտտում էյին:

Քյալլագյոգներն իրենք իրենց հաղթեցին:

— Թող ներկա յեղողները չնեղանան, — ասացին տղաները: — Սա նրանց մասին չի:

Աղջիկները պարեցին ուսական պարեր և յերգեցին: Յերգերը իրենք էյին հորինել լերեկի: Ե՛լի քյալլագյոգների մասին էր ինչ վոր:

Յես միայն մի տունը հիշեցի նրանցից՝ Ռ՛վ է պայքարում քյալլագյոգության դեմ, Ո՛վ է կռվում ինքն իրեն դեմ, Կպատասխանի մեզ խումբը համերաշխ: Դա Վանյա քյալլագյոգն է մեր խիզախ:

Հետո աղջիկները մտան սավանի հետևը և մլուլ էլին տալիս, ծղրտում էյին դես դեն, և վերջապես սավանը քաշե-



ցին: Կենդանի պատկեր դուրս յեկավ՝ պիոներներ բոլոր յերկրների:

— Իսկ հնգիկներին նրանք մոռացել են, — շնչացինձ կեղևան: — Վո՛չինչ, մենք նրանց ցույց կտանք:

Հետո Պավլունկան գարմոնով պարեց, իսկ գարմոնի վրա նվագում էր հովիվ Գրիշկան: Զոռ է նվագում Գրիշկան:

Հետո ժենկա Կովալյովան վոտանավորներ ասաց, Սաշկա Կորենկովն էլ՝ նույնպես:

Իսկ հետո էլ դուրս թռանք մենք: Թռանք առաջ, կիսամերկ, ձեռքներին՝ փայտեր, գրվաներին՝ փետուրներ, իսկ վարտիկներին վրա էլ կտորներից շերտեր:

— Ես ո՞վքեր են, սատանեք են, — կանչեց քեռի Պրոխորը և ծիծաղեց:

Նրա հետ մյուսներն էլ ծիծաղեցին:

— Պարի՛ր, — շնչում է կեղևան: — Սկսի՛ր, թե չե՛ եֆֆեկտը — տպավորությունը կկորչի:

Յես ամոթից քիչ էր մնում մեռնելի: Եուրջս բոլորը ծիծաղում են, յես եստեղ դէռ պիտի պարեմ էլ:

Յես բարձր գոռացի, վոնց վոր Վանկան ցերեկը սովորեցրել էր, և սկսեցի խարուչկի շուրջը թռչկոտել: Կեղևան ու Վանկան նույնպես գոռացին, ողի մեջ փայտերն են ձոռում, իսկ գոռալը չեն գոռում, մենակ ինձ են թեխողրում:

— Գոռա՛, Դու եզ ինչո՞ւ չես գոռում:

Յես գոռացի, թռա, և հանկարծ փետուրներից սարքած գլխիս սարքը գլխիցս թռավ և ուղիղ կրակի մեջ: Յես կանգ առա, ուզում էլի բռնել — դուրս քաշել, բայց ուշ էր, մենակ սև ածուխները մնացին: Են ժամանակ յես գլուխս



առա ձեռքերիս մեջ և դուրս փախա: Կեղևան և Վանկան ել իմ հետեից:

— Չխայտառակվեցինք,— հարցնում եմ յես:

— Վոչինչ,— ասում ե Վանկան.— մենակ կարծեմ բոլորը չհասկացան, վոր մենք հնգիկներ ենք:

— Տեսե՛ք,— կանչեց կեղևան և հետ վազեց դեպի խաբուռը: Ենտեղ ծրագրի վերջին համարն սկսվեց՝

Պատ և Պատաշոնը:

Կկատարեն Ֆիմկա Վերստան և հաստիկ Վովկան:

60

Լազերային վերջին առավոտն սկսվեց արաստվոր կերպով: Սովորականի պես չէր: Մենք հերթի կանգնեցինք խոհանոցի մոտ: Խոհանոցի նախասենյակում սեղանի մոտ նրասած էր Սառան: Նա ձեռքին բռնած ունեք պիտեերների ցուցակը: Սառայի կողքին դրված էր կշեռքը:

— Մալա՛գին,— կանչեց Սառան:

Կեղևան կանգնեց կշեռքի վրա: Դաշա մորաքույրն ել շարժեց քարերն ու ասաց՝

— Քառասո՛ւն յերեք:

Սառան գրեց և ասաց կեղևային՝

— Յերկու կիլո ավելացել ես:

Կեղևայից հետո, գնաց Վանկան, նա ավելացել էր կիլո և կես:

— Կես կիլոն դու շրի մեջը թողիր, յերբ ընկար,— ասաց կեղևան:— Հո ինձանից պակաս չես կերել, բայց քիչ ես ավելացել:

Վանկայից հետո յես բարձրացա կշեռքի վրա:

— Ոհո՛,— ասաց Սառան:— Յերկու կիլո յերկու հարյուր գրամ ավելացել ես: Ա՛յ, կեցցես:

— Իսկ յես:— Հարցրեց Վանկան: Նա իմ հետևն էր կանգնել:

— Դե դու նիհարել ես,— ասաց կեղևան:— Դու յերեկ վոչ թե ավելացել ես, այլև կորցրել ես քաշիցդ:

Վանկան բարձրացավ կշեռքի վրա:

— Ինչքա՞ն էր քո քաշը,— հարցրեց Դաշա մորաքույրը:

— Յերեսուն իննը կիլո,— ասաց Սառան:

— Դե՛, չի կարող պատահի.— առարկեց Դաշա մորաքույրը:

Մենք բոլորս հավաքվեցինք շուրջը:

— Իսկ ինչ ե՛ վոր:

— Ի՞նչը չի կարող պատահի:

— Դե, են,— ասում ե Դաշա մորաքույրը,— վոր մեր կտրիչը բոլորին ել գերազանցեց: Հինգ կիլո վեց հարյուր գրամ ե ավելացել:

— Ոհո՛:

— Յես անցյալ տարի ել ավելացա,— ասաց Վովկան:— Ես տարի վեց հարյուր գրամով ավել ե:

61

Իսկ հետո, մենք գնացինք իրերը կապելու:

Իրերը դարսեցինք սայլի վրա:

Սայլը մեր իրերը տարավ կայարան:

Սայլի հետեիցն ել մենք գնացինք:

Կայարանում մենք գնացքին եյինք սպասում:

Գնացքն ըստ չվացուցակի յեկավ յերեք ժամ քսան րոպեյին:

Մենք իրերը ժապավենածև՝ ձեռքից ձեռք տալով վազոնի լուսամուտից— տեղավորեցինք:

Վազոն նստեցինք շղթայածև— առաջ՝ փոքրերը, հետո՝ մեծերը:

Նայում ելինք վազոնի լուսամուտներից:

Առաջ տեսնում եյինք դաշտերը, գյուղերը, ճանապարհը, իսկ ճանապարհի վրա ել՝ խոտով բարձած սայլը:

Հետո՝ քաղաքի տները

Տեսանք կտրածև տունը, վոր չես իմանում բաղնիք եր թե գազաթագստի տեղ:

Անցանք կամուրջը, վորի տակից տրամվաներն եյին
վազում և մարդիկ քայլում:

Հետո վազոնը մթնեց—հասանք կայարան:

Յեվ ստոպ՝ կանգ առանք.

— Հասանք,— կանչեց կոստյան, — Ով վոր տուն ե ուզում
ձեռք բարձրացնի:

Մենք բոլորս ել ձեռքներս բարձրացրինք, իսկ յես՝ մինչև
անգամ յերկու ձեռքս:

Հավ ե լագերում, բայց քանի վոր արդեն քաղաք ենք
հասել, պիտի և տուն գնալ.



«Ազգային գրադարան»



NL0386961

4725

книг. 1 л. 50 ч.

В. Петров
История одного лагеря
ГНЗ ССР Арханг. Эридань